Եթե իրականում ապացույցն անհետացել է, չկա այն, բնականաբար, փորձաքննություն դրա հիման վրա չի կարող իրականացվել... Քննչական մարմինների ձեռքից ինչ-որ բան անհետանալը եզակի դեպք է, ասեմ, որ իմ գործունեության ընթացքում ավելի շատ դեպքեր են եղել, որ ինչ-որ բան է հայտնվել քննչականի ձեռքում, այլ ոչ թե կորել:

Կարդացեք՝ էջ 4

Եթե հայն ինքնուրույն չկարողացավ ազատագրվել, միակ հույսը մնում է ավելի ատելի տիրապետությունն ավելի տանելի տիրապետությամբ փոխարինելը: Բայց երբ հույսը օտարն է, մնում է գնալ Իսրայել Օրու ճանապարհով՝ գնալ այլ մայրաքաղաքներ եւ համոզել, որ գան եւ ազատագրեն աշխարհի ամենաքրիստոնյա եւ ամենաճնշված ժողովրդին:

Կարդացեք՝ էջ 5

Երկրի ղեկավարը վաղուց է բացահայտել իրեն՝ նրա խոսքը կտրված է իրականությունից, նրա որոշումները՝ հանրային շահից, նրա վարքը՝ պետական պատասխանատվությունից: Նրա հետ խոսելն անիմաստ է՝ նա չի լսում, չի ուզում լսել, նա ընտրել է իր ճանապարհը եւ պատրաստ է անցնել այն մինչեւ վերջ՝ անկախ գնից:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 6 (4121), 27 հունվար, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Հայ առաքելական եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը հայտարարել է, որ փետրվարի 16-19-ին կմասնակցի Եպիսկոպոսաց ժողովին, որը Մայր Աթոռը հրավիրել է Ավստրիայում: Նա Նիկոլ Փաշինյանին միացած 10 եպիսկոպոսներից է: Ավելի վաղ նրանք հայտարարել էին, որ չեն մասնակցելու Եպիսկոպոսաց ժողովին, եւ կոչ էին արել, որ Մայր Աթոռը չեղարկի ժողովը: Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի կայքում տեղադրված հայտարարությունից պարզ չէ՝ Հովնան արքեպիսկոպոսը լքե՞լ է Եկեղեցու բարենորոգման խորհուրդը, որի կազմում է նաեւ կաթողիկոսի հրաժարականը պահանջող Նիկոլ Փաշինյանը: Հայտարարությունում միայն նշված է, որ Հովնան արքեպիսկոպոսը Եպիսկոպոսաց ժողովից հետո՝ փետրվարի 20-21-ին, կմասնակցի նաեւ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովին: Հոգեւոր դասը կարծում է, որ չնայած նա բացահայտ չի հայտարարում, որ լքում է Փաշինյանին, սակայն սա լռելյայն հեռացում է: Լուրեր կան, որ մյուս 9 տիրադավների շարքում եւս կան տատանվողներ, որոնք կվերադառնային, սակայն վախենում են Փաշինյանի պատժից, իսկ Հովնան արքեպիսկոպոսը Հայաստանում չի գործում՝ ավելի ազատ է: Մեզ ասացին, որ տիրադավների կուրատոր Սամվել Կճոյանը՝ Արարատյան թեմի առաջնորդը, օրերս հավաքել է տիրադավներին, դուխ տվել՝ ասելով, որ քիչ է մնացել, իրենք շուտով հաջողության են հասնելու:

Արցախի թեմի տիրադավ առաջնորդ, Նիկոլ Փաշինյանի կողմն անցած եւ Վեհափառի հրաժարականը պահանջող Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի հարցը կարծես մոտ է հանգուցալուծմանը: Մենք տեղեկացանք, որ Արցախի նախագահի պարտականությունները կատարող, ինչպես նաեւ՝ ԱԺ նախագահ Աշոտ Դանիելյանը Մայր Աթոռում հանդիպում է ունեցել Վեհափառի հետ եւ փոխանցել արցախցիների մեծամասնության խնդրանք-կոչը՝ թեմի առաջնորդի փոփոխության մասին: Նրան առաջարկել են այդ պահանջը ֆորմալ ձեւակերպել եւ նամակով ներկայացնել: Ապա վստահեցրել են, որ անպայման հարցը կմտնի օրակարգ: Արցախցիներն ակնկալում են, որ առաջիկայում կայանալիք Եպիսկոպոսաց ժողովում թեմի տիրադավ առաջնորդը կզրկվի կարգավիճակից, եւ նրան տեղապահ կնշանակեն: Ի դեպ, մեր աղբյուրն ասում է, որ եթե մյուս տիրադավների դեպքում էլ գրավոր ձեւակերպված պահանջներ լինեն՝ կարգալույծ կամ պաշտոնանկ անելու, դրանք եւս կքննարկվեն: Մասյացոտնի թեմի դեպքում, օրինակ, նման դիմում է եղել:

Կարմիր միջանցքը

Անգամ քաղաքագիտությունից, աշխարհաքաղաքական վերլուծություններից հեռու քաղաքացիները կարող են մի շարք պարզ փաստեր համադրել ու բարդ խնդիրներից գլուխ հանել՝ չտրվելով իշխանական մանիպուլյացիաներին: Դեռ 2020 թվի նոյեմբերի 9-ի փաստաթղթից պարզ դարձավ, որ հաղթող կողմն այլ պահանջներ էլ ունի մեզնից: Դրանցից մեկը Նախիջեւանի եւ Թուրքիայի հետ ուղիղ կապն էր՝ Մեղրիով, մյուսը Տավուշից գյուղերն էին, որոնց մասին այդ օրերին խոսք գնաց, բայց փաստաթղթից հանվեց այդ պահանջը: Մեղրիով ճանապարհի երաշխավորը պետք է Ռուսաստանը լիներ, բայց հայկական կողմը շատ վճռական էր տրամադրված, եւ անգամ այն ժամանակ, երբ ադրբեջանցիները փակեցին Լաչինի միջանցքը, ու ակնհայտ էր, որ դրա բացումը կարող էր իրականացվել Մեղրիով ճանապարհը տալուց հետո, հայկական կողմը չտվեց միջանցքը, այլ հայտարարեց, որ դա կարմիր գիծ է մեզ համար: Հետագա տարիներին Նիկոլ Փաշինյանը բազում քարտեզներ գծեց ու ցուցադրեց, բազում ելույթներ ունեցավ, թե՝ եկեք բոլոր ճանապարհներն ապաշրջափակենք, որտեղով ուզում եք՝ եկեք-անցեք-գնացեք, մեկի տեղը պատրաստ ենք չորս ճանապարհ ձեզ առաջարկել, մենակ Մեղրին չուզեք: Չանցավ: Ադրբեջանը Մեղրին էր ուզում եւ, ի վերջո, ստացավ այն: Նիկոլ Փաշինյանը փորձեց դա ներկայացնել որպես կամովին զիջում, որ դա միջանցք չէ՝ Թրիփ է, որ Թրամփն է դրան անձնական երաշխավոր կանգնում, որ դրանով միլիարդներ են հոսելու մեր տնտեսություն եւ այլն: Բայց փաստ է, որ այլեւս ճանապարհների ապաշրջափակումից չեն խոսում, «Խաղաղության խաչմերուկն» այլեւս վիրտուալ տերմին է, Հայաստանով անցնող խաչաձեւ ուղիների քարտեզներն այլեւս ասպարեզում չկան: Հիմա ջանքեր են գործադրում՝ մի քանի գնացք բեռ բերեն Հայաստան, որ ցույց տան, թե մենք միայն «տվող» չենք, նաեւ՝ «ստացող» ենք:

Կառավարության մեր աղբյուրները հայտնում են, որ Ադրբեջանից չորրորդ կարգի հացահատիկ եւ դիզվառելիք ներկրելուն զուգահեռ, բանակցություններ, աշխատանքներ են տարվում նաեւ շաքարավազի ներկրման հարցերով: Մեզ ասացին, որ այդ հարցում եւս շահագրգռություն է ցուցաբերում ներկա իշխանությունների սրտի օլիգարխը՝ շաքարավազի ներկրման մոնոպոլիստ Սամվել Ալեքսանյանը, եւ մոտ ապագայում նրա այս մի երազանքն էլ, ըստ էության, իրականություն կդառնա: Հիշեցնենք, որ Ադրբեջանից հացահատիկ ներմուծող ընկերությունը Սամվել Ալեքսանյանին է պատկանում, իսկ բենզին ներմուծողների թվում գործարարի կնոջ՝ Շողերինայի եղբոր ընկերությունն է՝ Սամվել Մկրտչյանին պատկանող «Շիշա ուորլդ»-ը:

ՈՒՐ ՈՐ ԳՆԱ՝ ՀԵՏԸ ԿԳՆԱՄ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հովանավորյալ Անդրանիկ Հարությունյանը՝ Մարտունու ԲԿ-ի տնօրենը, Փաշինյանի շրջիկ հավատացյալների թափառախմբի անբաժան մասն է կազմում: Հավանաբար, այս ձեւով նա իր երախտագիտությունն է հայտնում մարզպետին՝ իրեն տնօրեն նշանակելու համար: Ա. Հարությունյանը նաեւ Մարտունի համայնքի ավագանու անդամ է, որ միայն ձեռք բարձրացնելու համար է ավագանու նիստերին մասնակցում: Իր մարզում պատարագների չմասնակցող Անդրանիկ Հարությունյանը երեկ Գեղարքունիքի մարզից հասել էր Արագածոտնի մարզ, որ պատարագի մասնակցի. «Ես էսօր էլ եմ գնացել, երեկ էլ եմ գնացել, բոլոր կիրակի օրերը գնացել եմ պատարագի: Փաշինյանի հետ եմ գնացել, որտեղ որ կարիքը զգում եմ, գնում եմ, իմ իրավունքը չի՞, որտեղ ուզենամ, էնտեղ գնում եմ: Բոլոր տեղերը, որտեղ Փաշինյանը գնալու է, ես կգնամ, երեկ էլ Թալին եմ գնացել, ի՞նչ խնդիր կա՝ ամո՞թ է գնալ եկեղեցի»: Իհարկե՝ ամոթ չէ, իսկ առանց Փաշինյանի՝ Ձեր տարածաշրջանի ո՞ր եկեղեցում եք պատարագի մասնակցել: «Տաթեւ եմ գնացել, Հաղարծինում էլ եմ եղել»: Դուք Գեղարքունիքի մարզից եք՝ ձեր մարզի ո՞ր եկեղեցում եք կիրակի օրերը պատարագի մասնակցել, ասենք՝ Մարտունի համայնքի եկեղեցում երբեւէ մասնակցե՞լ եք պատարագի: «Ես չեմ հիշում, որ կոնկրետ ասեմ՝ որ օրը որտեղ եմ մասնակցել, բայց ինձ որտեղ պետք եղավ, այնտեղ էլ կգնամ»: Դուք նաեւ ավագանու անդամ եք, անձամբ համայնքին վերաբերող գեթ 1 հարց բարձրացրած կա՞ք՝ հօգուտ ձեր համաքաղաքացիների: «Ոչ, ընդամենը կաբինետային քննարկումների կամ մեր խմբակցության քննարկումների ժամանակ ներկայացնում ենք հարցեր եւ լուծումները գտնում ենք հօգուտ տարածաշրջանի ժողովրդի»:

ԳՈՐԾ

ՀԻՄԱ ԱՄԵՆ ԲԱՆ ՍՊԱՍԵԼԻ Է, ԲԱՅՑ ԱՅՍ ԴԵՊՔՈՒՄ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ

Հայաստանում ամեն բան այն աստիճան է գլխիվայր շուռ եկել, որ քննչականից շարունակ առանձնակի կարեւորություն ունեցող իրեղեն ապացույցներ են անհետանում, եւ որեւէ մեկը դրա համար պատասխանատվություն չի կրում: Օրինակ՝ նախորդ տարվա մայիսին Դեղատան 3 հասցեում գտնվող Քննչական կոմիտեի Տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության շենքից հափշտակվել էր որպես իրեղեն ապացույց պահվող 590 հազար ԱՄՆ դոլար. ի դեպ, սա՝ այն դեպքում, երբ «չիրկիզվող պահարանը», որտեղ պահվել է գումարը, եղել է 6-րդ հարկում: Թե ինչպես էր ենթադրյալ գողը հասել քննչականի 6-րդ հարկ եւ աննկատ գողություն կատարել, հանելուկ մնաց, բայց պարզվեց, որ գողությանը մասնակցել է քննչականի բարձրաստիճան աշխատակիցներից մեկը:

Նյութերը՝
Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Կիրակի օրը «Հրապարակը» գրեց, որ անհետացել է Արշակ սրբազանի գործով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցը՝ մարիխուանայի գլանակը: Պարզվում է՝ այդ հորինված մեղադրանքի համար հիմք հանդիսացող իրեղեն ապացույցը՝ թմրախոտի գլանակը, Արմավիրի մարզային քննչական վարչությունից անհետացել է: Այսինքն՝ քրեական գործերի կնքման, պահպանման կանոնները չեն պահպանվում: Նախկին դատախազ, իրավաբան **Ռաֆֆի Ասլանյանը**, մեզ հետ զրույցում խոսելով Արշակ սրբազանի գործի եւ անհետացած թմրանյութի մասին, ասաց. «Եթե պարզվի, որ իսկապես իրեղեն ապացույցն անհետացել է, ապա այդ դեպքում անձին քրեական պատասխանատվության ենթարկելը կդառնա լիովին անհիմն: Իհարկե, մենք ապրում ենք մի երկրում, որտեղ ամենուր ապօրինություններ են, եւ ինչ ցանկանում են՝ անում են, սակայն եթե մենք խոսում ենք իրավունքի տեսանկյունից՝ եթե չկա իրեղեն ապացույց, ապա անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության՝ թմրամիջոցի ապօրինի շրջանառության համար, անկախ այն բանից՝ դա իրացմա՞ն նպատակով է ձեռք բերվել, թե՞ այլ պատճառներով:

Կդժվարանամ ասել, թե կոնկրետ ինչ ապօրինի ճանապարհներով կարող են սրբազանի դեմ գործել, սակայն, ինչպես ապօրինաբար կալանքի են տարել վերջինիս, նույնպիսի ապօրինությամբ էլ գործը կարող են շարունակել: Եթե ինչ-որ մի դեպքից միայն յոթ տարի անց անձին կալանավորում են, առանց որեւէ կալանքի հիմքի, ապա նույն գործելակերպով էլ կարող են գործի ընթացքը շարունակել, անգամ՝ երբ չկա գործի իրեղեն ապացույցը:

Քննչականում լինում են դեպքեր, երբ, չգիտես թե ինչպես, ապացույցներն անհետանում են, հատկապես՝ թմրամիջոցների պարագայում: Թմրամիջոցի պահպանությունը պատշաճ կարգով չի իրականացվում, երբեմն դրանք հափշտակվում են: Քննությունը պետք է պարզի հանգամանքները: Հայաստանում, ցավոք, այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ ամեն բան սպասելի է, սակայն, որ բանը կարող է հասնել նրան, որ իրեղեն ապացույցի բացակայության պարագայում գործին շարունակեն ընթացք տալ, փոքր-ինչ չափազանց կլինի»:

ՀԵՇՏՈՒԹՅԱՄԲ ՉԵՆ ՆՄԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԱՅԱՑՎՈՒՄ

Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանն օրերս հայտարարեց, որ մասնակցելու է Ավստրիայում կայանալիք Եպիսկոպոսաց ժողովին, որը հրավիրել է Ամենայն հայոց կաթողիկոսը: «Առաջնորդ սրբազանը կմասնակցի նաեւ Մայր Աթոռի Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովներին: Խնդրում ենք մեր հավատացյալ ժողովրդին՝ աղոթքով հիշել այս երկու ժողովները, որ դրանք Աստծո առաջնորդությամբ լինեն օրհնաբեր եւ պտղաբեր»,- ասված է Հովնան արքեպիսկոպոսի հայտարարության մեջ:

Նշենք, որ Հովնան սրբազանը Նիկոլ Փաշինյանին միացած 10 տիրադավ հոգեւորականներից է, եւ նրա այս որոշումը բավականին անսպասելի էր, ու շատերը ենթադրեցին, որ «տիրադավների ճամբարը» ճաքեր է տվել, որովհետեւ ընդամենը օրեր առաջ նրանք հորդորել էին կաթողիկոսին՝ չեղարկել ժողովը: Այս եւ այլ թեմաների մասին «Հրապարակը» զրուցել է **Տեր Նշան քահանա Պանֆյորովի** հետ:

- Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ է իշխանությունների՝ «եկեղեցու բարենորոգման» տիրադավ խմբին միացած Հովնան Տերտերյանը որոշել մասնակցել Եպիսկոպոսաց ժողովին: Ի՞նչ ասելիք եւ անելիք ունի նա:

- Թող մասնակցի, կարող են եւ պետք է մնացածներն էլ մասնակցեն, բոլոր եպիսկոպոսները պետք է մասնակցեն անխտիր: Գուցե նրանցից մի քանիսը զրկված են պաշտոններից, սակայն, ի վերջո, դեռ եպիսկոպոսներ են եւ պետք է մասնակցեն: Ի վերջո, Եպիսկոպոսաց ժողովը հարցերի լուծումներ պետք է առաջարկի: Պետք է նստել եւ քննարկել: Պետք է դեռ սկզբից այդ ճանապարհն ընտրվեր, այլ ոչ թե ինչ-որ արտաքին ուժերի ազդեցությամբ փորձեին ինչ-որ բան անել, «բարեփոխումներ» անել եւ այլն:

- Ինչո՞ւ նրանք կարգալույծ չեն հռչակվում: Կա նման հասարակական պահանջ Վեհափառից:

- Ի վերջո, ամեն կարգալուծություն մի մեծ կորուստ է Եկեղեցու համար: Հեշտությամբ չէ, որ նման որոշումները կայացվում են: Վեհափառը Եկեղեցու՝ ընտանիքի հայրն է, մենք զավակներն ենք: Նրանք, ովքեր ծառայության մեջ կխախտեն կանոններ, չեն արժանանա հայրական օրհնությանը եւ կհասնեն հեռացման, սակայն դա բավականին դժվար ճանապարհ է, եւ մենք ոչ մեկի համար չենք ուրախանում, ոչ էլ Վեհափառն է ցանկանում բոլորին կարգալույծ անել:

- Ամեն կիրակի, ինչ-որ եկեղեցում հերթական քահանան զեղչում է Վեհափառի անունը, սակայն հաջորդ շաբաթ, երբ Փաշինյանն այլ եկեղեցի է գնում, տվյալ եկեղեցում այլեւս չեն զեղչում Վեհափառի անունը: Սա ի՞նչ նախադեպ է:

- Վեհափառի անունը պետք է միշտ հիշատակվի, եթե Փաշինյանը նման պահանջ է դնում, եւ ոմանք դա կյանքի են կոչում, լավ բան չեն անում: Այո, քահանաները հաջորդ շաբաթներին չեն զեղչում Վեհափառի անունը, քանի որ Փաշինյանն է այդպես պահանջում իր իսկ «պատարագների» ժամանակ: Ամեն դեպքում՝ եկեղեցու սպասավորը չի կարող չհիշատակել Վեհափառի անունը, դա սխալ մոտեցում է: Այդ պատարագներն այնքան կտեւեն, որքան նա մնա իշխանության մեջ….

- Չկա՞ մտավախություն, որ տիրադավների թիվը կավելանա:

- Հուդայի 30 արծաթի նման՝ նրանց թիվը չի գերազանցի այդքանը: Բայց անգամ եթե նրանց թիվն ավելանա, ոչինչ չի փոխվելու, Վեհափառը Վեհափառ է, իսկ ընտրողն ամենայն հայոց ժողովուրդն է, այլ ոչ թե միայն Հայաստանի ժողովուրդը:

- Նախօրեին տեղեկացանք եւ գրեցինք, որ Արշակ սրբազանին դատում են, սակայն իրեղեն ապացույցը գործից անհետացել է: Ինչպե՞ս են մարդուն առանց ապացույցի դատում:

- Այս ամենը փաստում է սխալ իրավական ընթացքի մասին: Արդարությունը հաղթելու է, ինչպես Միքայել սրբազանն է ասում՝ մահվանից հետո էլ արդարացվելու եմ, այդ դուք եք մնալու մեղքերի մեջ…

Կողմ եմ եկեղեցու բարենորոգմանը, բայց Վեհափառի անունը տալիս եմ

Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի Սբ Աստվածածին, Սբ Ավազան եկեղեցիների հոգեւոր հովիվ **Տեր Շնորհք քահանա Մաթեւոսյանը** եւս միացել է տիրադավ եպիսկոպոսներին: Մեզ հետ զրույցում Տեր Շնորհք քահանան ասաց, որ իր վրա որեւէ մեկը ճնշում չի գործադրել, ինքը ցանկացել է՝ միացել է. «Միացել եմ Փաշինյանի՝ Եկեղեցու բարեփոխման ծրագրին, քանի որ ուզում եմ, որ ամեն ինչ թափանցիկ լինի: Թափանցիկ լինի Եկեղեցու կառավարումը, որ միապետություն չլինի, որ նստեն-խորհրդակցեն բոլորն իրար հետ, ոչ թե մեկը ներկայացնի ու ինքն էլ անի: Ժողովուրդն իմանա, թե Եկեղեցին ինչ որոշումներ է կայացնում, ու տեղյակ լինի»: Չե՞ք կարծում, որ այս պայքարը ոչ թե կաթողիկոսի դեմ է, այլ՝ մեր կրոնի, Եկեղեցու եւ հավատքի: «Չէ, էդպիսի բան չկա, հանգիստ եղեք»:

Երեկ եկեղեցում՝ պատարագի ժամանակ, Դուք զեղչե՞լ եք Վեհափառի անունը: «Առաջնորդն էդպիսի հրահանգ չի տվել, եւ ես էլ պատարագի ժամանակ Վեհափառի անունն ասում եմ»,- ասաց քահանան՝ նկատի ունենալով, որ թեմի առաջնորդն այս անգամ չի հրահանգել՝ պատարագից զեղչել Վեհափառի հատվածը:

Ստացվում է՝ Նիկոլ Փաշինյանը որ կիրակի գնում է եկեղեցի, այդ կիրակի օրը պատարագ մատուցող քահանան իր ներկայությամբ զեղչում է Վեհափառի անունը, իսկ մյուս կիրակիները նորմալ պատարագ են անում եւ արտասանում կաթողիկոսի անունը, այդպե՞ս է: «Դե, հիմա՝ կանում էդպես ա, հա: Մինչեւ հիմա ես Վեհափառի անունը չեմ զեղչել»: Եթե Փաշինյանը որոշի այս կիրակի Լեռնանիստի եկեղեցի գալ, կսպասե՞ք Կոտայքի թեմի առաջնորդի հրահանգին, կզեղչե՞ք Վեհափառի անունը: «Կոտայքի թեմի առաջնորդը կապ չունի, դա իմ որոշումն է»: Ինչպե՞ս հասկանալ՝ Դուք կանգնա՞ծ եք ձեր թեմի առաջնորդի կողքին: «Չէ, բարեփոխման կողքին»: Այսինքն՝ դեմ եք կոնկրետ Վեհափառին: «Ես բարեփոխման կողմնակից եմ եւ անձամբ կաթողիկոսի դեմ բան չունեմ»: Բայց Փաշինյանի՝ Եկեղեցու «բարեփոխման» ծրագիրը կաթողիկոսին դեմ է, դա սկսվել է նրան իր պաշտոնից հեռացնելու նպատակով: «Իրա դեմ չի, իրեն խնդրում են, որպեսզի գնա հանգստի, եւ բարեփոխումը կատարվի, ոնց հասկացանք, ինքն ա էդ բարեփոխմանը դեմ»: Կարծում եք՝ Փաշինյանին կաջողվի՞ փոխել կաթողիկոսին: «Եթե Աստված գտնի, որ դա բարի է, կհաջողվի»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՂԵ

ՆՄԱՆ ԱԳՐԵՍԻՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԲԱՆԱԿԻ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ԱՊԱՀՈՎԵԼ

Շաբաթ օրը մանրամասն գրել էինք, թե ինչպես է նախկին պատմության ուսուցիչ, ներկայում պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն իր ղեկավարած ապաքաղաքական կառույցում՝ պաշտպանության համակարգում, փորձում կյանքի կոչել Նիկոլ Փաշինյանի եկեղեցաքանդ ծրագիրը: Բանակում ծառայող հոգեւոր սպասավորների նկատմամբ ճնշումների վերաբերյալ վերջին շաբաթներին բազմաթիվ ահազանգեր հնչեցին: Տարբեր անձինք պատմեցին, որ գնդերեցներին փորձում են ներգրավել Վեհափառի դեմ «բարենորոգման» շարժմանը: Մեզ պատմել էին, որ բանակի հոգեւոր դասին դավանափոխ անելու կեղտոտ աշխատանքներն անձամբ Պապիկյանն է իր ձեռքը վերցրել եւ փորձում է դա իրականացնել՝ իր մի քանի ենթակա կատարողների օգնությամբ:

Բանակում շուրջ 50 գնդերեց է ծառայում, որոնք համարվում են պայմանագրային աշխատողներ եւ ստանում են մոտ 2 հարյուր հազար դրամ աշխատավարձ: Նրանք, որպես կանոն, երիտասարդ հոգեւորականներ են, որոնք հոգեւոր ծառայության իմաստով ենթարկվում են Ամենայն հայոց կաթողիկոսին, սակայն աշխատավարձ են ստանում ՊՆ-ից եւ պայմանագրային ծառայողներ են համարվում: Գրել էինք, որ այս տարվա հունվարի 15-ին գնդերեցները հրավիրված են եղել Վեհափառի մոտ՝ ժողովի: ՊՆ ղեկավարությունը, նախապես իմանալով այդ մասին, Գլխավոր շտաբի պետի մակարդակով փորձել է խոչընդոտել դրան եւ հատուկ հրաման է արձակել, որ բանակում իրականացվող կարեւոր՝ ինքնասպանությունները կանխելու թեմայով միջոցառումների շրջանակում գնդերեցները պետք է, հունվարի 15-ից սկսած, մի քանի օր պարտադիր գտնվեն այն զորամասերում, որտեղ ծառայություն են իրականացնում, եւ ներկա գտնվեն այդ միջոցառումներին՝ իրենց քարոզչական խոսքը հնչեցնեն:

Բնականաբար, գնդերեցները հասկացել են, թե որն է այդ հապճեպ հավաքի բուն նպատակը, եւ չեն ենթարկվել՝ հունվարի 15-ին գնացել են Վեհափառի հետ հանդիպման, իսկ հաջորդ օրերին՝ մասնակցել բանակի միջոցառումներին: Սակայն ՊՆ ղեկավարությունը որոշել է «աշխատել» նրանց հետ: Նրանք հրավիրվել են Գլխավոր շտաբ, որտեղ ԳՇ պետ Էդուարդ Ասրյանը պարզաբանումներ է պահանջել, թե ինչու գնդերեցները չեն կատարել իր հրամանը եւ առաջին օրը չեն մասնակցել միջոցառմանը: Մոտ մեկ ժամից հանդիպմանը միացել է նաեւ նախարար Սուրեն Պապիկյանը, որը սկսել է բացահայտ քարոզել Փաշինյանի՝ Եկեղեցու վերաբերյալ «բարենորոգման ծրագիրը», ու ակնկալել է, որ բանակի հոգեւորականներն էլ պետք է միանան դրան, քանի որ բանակը մեկ ընդհանուր օրգանիզմ է: Մոտ 5 ժամ տեւած հանդիպմանը, սակայն, գնդերեցները բավականին պինդ են եղել, առարկել են, ծանրակշիռ փաստարկներ բերել՝ հակադրվելով Սուրեն Պապիկյանին: Պապիկյանն անգամ փորձել է նյութապես շահագրգռել՝ ակնարկելով աշխատավարձերի բարձրացման մասին: Հետո երրորդ փորձն են իրականացրել՝ գնդերեցների հետ հանդիպել է նաեւ պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը՝ «Լամպչկա» մականունով, որն էլ իր հերթին է փորձել համոզել, որ միանան Եկեղեցին քանդելու փաշինյանական ծրագրին, բայց՝ ապարդյուն:

Այս ինֆորմացիան հրապարակվելուց հետո ՊՆ-ից մեզ նոր մանրամասներ հայտնեցին: Նախ, մեզ ասացին, որ արդեն մոտ մեկ տարի է՝ ՀՀ Պնախարարն ու տեղակալները, ԳՇ պետն ու նրա տեղակալները, վարչության պետերը յուրաքանչյուր եռամսյակ գաղտնի ընթացակարգով մեկ դրույքաչափ հավելյալ վարձատրվում են, այսինքն, ղեկավար կազմին գայթակղելու՝ կաշառելու գործընթացն իշխանությունը սկսել է դեռ մոտ մեկ տարի առաջ: Նաեւ դրանով են բացատրվում այն ջանքերը, որ ՊՆ ղեկավարությունը չի խնայում՝ Փաշինյանի ծրագրերին աջակցելու համար: Ասացին նաեւ, որ գնդերեցների հետ հանդիպման առաջարկը եւ համակարգումն իրականացվել են ԶՈՒ բարոյահոգեբանական ապահովման վարչության պետ, գնդապետ Սերյոժա Ստեփանյանի եւ նրա տեղակալ **Հայկ Պետրոսյանի** կողմից: Վերջինս մոլի նիկոլական է, մոլի հակառուս: Մենք կապվեցինք նրա հետ, փորձեցինք մի քանի հարց տալ, սակայն նա մեր հարցերից ցնցումների մեջ ընկավ, սկսեց սպառնալ, որ եթե շարունակենք հարցեր տալ, դատի կտա մեզ: Միայն կրկնում էր, որ մեր տեղեկությունները սուտ են՝ իրականությանը չեն համապատասխանում, իսկ ինքը կապ չունի. «Ես, առհասարակ, կոմպետենտ չեմ էդ հարցում, բացարձակապես հերյուրանք է եւ կեղծիք, ես ի պաշտոնե էդ հարցերում էլ չկամ՝ տեղեկատվական բլոկում, ասեմ՝ իմանաք»: Հիշեցրինք, որ ինքը զորքի բարոյահոգեբանական վիճակի ապահովման վարչության պետի տեղակալն է, սակայն Պետրոսյանը պնդեց, որ չի մասնակցել գնդերեցների հավաքի կազմակերպմանը: Այսինքն՝ հաստատում եք, որ նման հավաք եղել է, բայց Դուք չե՞ք կազմակերպել: «Ես պնդում եմ, որ նման բան չի էլ եղել»,- ինքն իրեն ուղղեց զինվորականը: «Ես ձեզ դատի կտամ... Չեմ սպառնում: Ովքեր ձեզ ինֆորմացիա են տվել, անհիմն տեղեկատվություն են տվել, դա չի համապատասխանում իրականությանը»: Վարչության պետի տեղակալի ագրեսիվ հայտարարությունները լսելուց հետո հարցրինք՝ այսկե՞րպ եք զորքի բարոյահոգեբանական վիճակն ապահովում: «Ագրեսիվ չեմ, այլ հստակ իմ շահերն եմ պաշտպանում, ու, առհասարակ, ո՞վ է իմ համարը Ձեզ տվել, ես թույլ չեմ տալիս՝ այլ անձինք ինձ զանգեն, միայն իմ մտերիմները»:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՉԻ ՀՈՒՅԶՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյանն անցյալ տարվա հուլիսից է զբաղեցնում նախարարի պաշտոնը: Երեկվա մամուլի ասուլիսի ժամանակ նախարարին լսելով, թվում էր, թե նրանից առաջ չի եղել ո՛չ բնապահպանությամբ, ո՛չ շրջակա միջավայրով զբաղվող նախարարություն, որ զրոյից է ստեղծվում այդ ամենը, եւ ինքն ամեն ինչ սկսել է զրոյից: Հիշեցնենք, որ նրա նախորդը Հակոբ Սիմիդյանն էր, որն առեղծվածային պայմաններում ազատվեց աշխատանքից եւ գնաց դեպի անհայտություն:

Նախարարն ասուլիսի սկզբում հայտարարեց, որ զրոյից են ստեղծվում էկոպարեկային ծառայությունը, օրենքները: Այնուամենայնիվ, նա քիչ էր տարբերվում բնապահպանության ոլորտը կառավարող մյուս նախարարներից: Օրինակ, նրանք՝ բոլորն էլ հայտարարում են, որ վերահսկում են ջրառը Սեւանա լճից, որ ամեն ինչ անելու են՝ դրա մակարդակը բարձրացնելու համար: Հունվարի 8-ի տվյալներով, օրինակ, լճի մակարդակը եղել է 1900 մետր, 22 սմ նիշի վրա, ինչն անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 16 սմ-ով ցարդ է:

Արփա-Սեւան ջրատարով լիճ է տեղափոխվել 120 մլն խորանարդ մետր ջուր՝ 2024-ի համեմատությամբ՝ 64 մլն խորանարդ մետրով պակաս: Ինչո՞ւ է այդպես, ինչո՞ւ են բոլոր նախարարները հավաստիացնում, որ Սեւանի մակարդակն իրենց ուշադրության կենտրոնում է, բայց ամեն տարի անգամ լճի մակարդակն իջնում է ու իջնում:

Նախարարը «Հրապարակի» հարցին պատասխանելով՝ նոր թիվ հրապարակեց: Արդեն ջուրը 17 սմ-ով է պակաս անցյալ տարվա ցուցանիշից: «Ես շատ կոնկրետ նշեցի, թե ինչ է արվում, որ լճի մակարդակի իջեցում չունենանք»,- ասաց նախարարը՝ նկատի ունենալով լճի մոնիտորինգի տվյալների ճշգրտման աշխատանքները, առափնյա գոտում ավտոմատ օդերեւութաբանական կայանի տեղադրումը, ավազանի 2 հիդրոլոգիական դիտակետի արդիականացումը: «Բայց պետք է հաշվի առնել տվյալ տարվա, տվյալ ժամանակահատվածի տվյալները: 2024 թվականն աննախադեպ ջրառատ տարի էր, նույնիսկ հեղեղումներ ունեցանք մարզերում, ջրամբարների բարձր լցվածություն ենք ունեցել, եւ 2025 թվականին արձանագրված ցուցանիշը կապ ուներ 2024 թվականի՝ ջրառատ տարի լինելու հանգամանքի հետ: Սեւանա լճի ուղղությամբ, նախ, օրենսդրական սահմանափակում կա, որ 170 մլն խմ-ից ավել չի կարելի օգտագործել ոռոգման նպատակով, վարչապետի կողմից էլ կա հանձնարարական, որ այս տարի անենք ամեն ինչ, որպեսզի այս ցուցանիշը չանցնենք: Ձեւավորված աշխատանքային խումբ կա»,- ասաց նախարարը, կարծես 170 մլն խմ-ն նորություն է: Այս սահմանաչափը միշտ եղել է ու միշտ խախտվել է:

Մեր մյուս հարցը բոլոր երեւանցիներին հուզող՝ քաղաքի օդի աղտոտվածությանն էր վերաբերում, վտանգավոր սահմանագծի հասած: Ինչպե՞ս ստացվեց, որ Երեւանում հարյուրավոր ծառեր հատվեցին, առանց շրջակա միջավայրի գնահատման, եւ ո՞վ որոշեց, որ միջավայրի եւ բնակչության առողջության համար դա անվնաս է, Դուք կենսաբազմազանության եւ էկոլոգիայի համար վտանգ չե՞ք տեսնում:

Այս հարցին նախարարը, որի ամեն երրորդ բառը «կենսաբազմազանությունն» էր, կրկնեց նույնը, ինչ հարյուր անգամ լսել ենք Երեւանի քաղաքապետարանի համապատասխան ՀՈԱԿ-ի ղեկավարից. «Սանիտարական հատումները եւ էտումներն ընդունված պրակտիկա են: Երբ կա ծառերի հիվանդություն, դա պետք է իրականացվի հնարավորինս շուտ, որպեսզի հիվանդության տարածումը կանխվի, կամ երբ ծառերն իրենց կենսաբանական տարիքին հասել ու անցել են, սկսվում է կտրման գործընթաց: Երեւան քաղաքի ծառահատումների հետ կապված՝ ես տեղյակ եմ, որ արվել է այս սկզբունքներով, իսկ ՇՄԱԳ-ի հետ կապված՝ ես վստահ չեմ, որ ՇՄԱԳ գործընթաց իրականացվեր»:

Այս պատասխանից հետեւում է, որ Երեւանի քաղաքապետարանն իր համար առանձին մարմին է, ինչ ուզում, անում է, եւ նախարարը հարյուրավոր ծառերի սպանդի հետ կապված արձագանք ու անելիք չունի: Մինչդեռ հենց շրջակա միջավայրի նախարարը պետք է առաջինն անհանգստացած լիներ այս խնդրով: Թռչունները մեծ ծառերի վրա բնադրվում էին, հիմա քաղաքային իշխանությունը հանել է այդ բարձր ծառերը եւ բերել է փոքր, օտար ծառեր: Հասկանալի է, որ սա եւս շրջակա միջավայրի վրա է անդրադարձել: Միջազգային բազմաթիվ փորձագետներ գրում ու ահազանգում էին, որ այն, ինչ կատարվում է Երեւանում, ուղիղ վտանգ է բնակչության առողջության, շրջակա միջավայրի եւ կենսաբազմազանության համար:

Բայց կենսաբազմազանությունը նախարարին հետաքրքրում է միայն COP 17-ի, այն է՝ «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի տեսքով, որի հյուրընկալ երկիրն այս տարի Հայաստանն է լինելու, ու շրջակա միջավայրի նախարարն իր ասուլիսի մեծ մասը նվիրեց այս միջոցառման նախապատրաստման թեմային: «Սա մեզ հնարավորություն է տալիս համարվել կոնվենցիայի գլոբալ քաղաքական զարգացման առանցքային կենտրոնը»,- ասաց նախարարը: 196 երկիր է մասնակցելու COP 17-ին: Կլինի դրանց թվում Ադրբեջանը, թե ոչ, նախարարն առայժմ չգիտի: Նա հայտարարեց, որ բոլոր երկրներին հրավեր է ուղարկվում: «Հրավիրող կողմը ոչ միայն Հայաստանն է: Հայաստանը հյուրընկալում եւ նախագահում է միջոցառումը: Դա համաշխարհային միջոցառում է, հրավիրող կողմը ՀՀ-ն է՝ որպես նախագահող, եւ ՄԱԿ-ը»,- ասաց նա:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԺԱՌ

«Ժամանակակից աշխարհում երկրի քաղաքակրթության մակարդակի կարեւոր ցուցիչներից մեկն այն է, թե ինչպես են վարվում աղբի հետ: Աղբը լուրջ ռեսուրս է, ճիշտ կառավարման դեպքում էական դերակատարում կունենա տնտեսության մեջ»,- կառավարության հերթական նիստերից

ԱՆԻՄԱՆԱԼԻ ԵՆ ԳՈՐԾԵՐԸ ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

մեկում ասել է վարչապետ Փաշինյանը: «Խոսքը» փոխանցվել է համապատասխան կառույցներին, այդ թվում՝ Վանաձորի համայնքապետարանին: Հարց է առաջանում՝ վերջին վեց տարիներին վարչապետի հանձնարարականն ինչպե՞ս են ընկալել «համապատասխան» կառույցները:

Լուսանկարի ձախ վերեւում ձյունապատ լանջեր են: Նրանց ստորոտում Վանաձորին հարեւան Արջուտ գյուղն է, իսկ գյուղի եզրին, արդեն կես դարից ավելի, Վանաձորի եւ շրջակա բնակավայրերի աղբավայրն է՝ գործող: Այն իրոք «գործում» է՝ իր համար հանգիստ «ծխում է»՝ ամառ թե ձմեռ, գիշեր թե ցերեկ: Մինչդեռ այս տարիների ընթացքում միլիոնավոր դոլարներ են քամուն տրվել, որպեսզի աղբը, իբր, դառնա «լուրջ ռեսուրս», «ճիշտ կառավարվի», «էական դերակատարում ունենա տնտեսության մեջ», վերանա գարշահոտությունը, չքանա ծուխը: Միայն գերմանական KfW զարգացման բանկը գրեթե 8.3 միլիոն եվրո է տրամադրել այդ նպատակների համար: Ո՞ւր են անհետացել այդ գումարները: Այո՛, ճիշտ եք մտածում՝ քամուն են տրվել: Այդ գումարները մսխվել են «աղբը կառավարելու» նոր հայեցակարգերի վրա. կազմվել են ծրագրեր, կազմակերպվել համաժողովներ ու ֆուրշետներ, պրեզենտացիաներ ու փարթիներ, քոֆիբրեյքներ ու ռաունդ-թեյբլներ, դիսքաշընեներ, թրեյնինգներ, նոն-ֆորմալ մոնիտորինգներ: Իսկ վերջում՝ «լաց եղան» հայեցակարգերը: Ասես վարչապետի խոսքը խոսք չէ, հանձնարարությունն էլ՝ հանձնարարություն:

ՏԱՊԱԼՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Տարիներ առաջ, երբ վանաձորցիները տեղեկացան «Կոշտ թափոնների ինտեգրված կառավարման համակարգ» ծրագրի մասին, անկեղծորեն հուզվեցին: Հարցով հետաքրքրվել էր գերմանական KfW զարգացման բանկը, որը, ՀՀ կառավարության (պատասխանատու՝ այն ժամանակ ՏԿՀՆ) աջակցությունը ստանալով, պատրաստակամություն էր հայտնել՝ մեծ ֆինանսական ներդրում անել Վանաձորի, Դիլիջանի եւ հարակից համայնքների աղբահանության, տեղափոխման, վերամշակման, ընդհանրապես՝ կենցաղային թափոնների կառավարման գործում: Ինչպե՞ս չոգեւորվեին մարդիկ: Ավելի քան կես դար կենցաղային աղբը տեղափոխվում է Վանաձորի կենտրոնից 8-9 կմ հեռավորության վրա գտնվող Արջուտ գյուղի մերձակայք: Աղբավայրը լուրջ գլխացավանք է դարձել նաեւ գյուղի բնակիչների համար. մեծ թեքություն ունեցող լանջերից հողը սահում է, հետը՝ աղբը, հասնում գյուղատնտեսական հողեր: Տարածքը մշտապես հրդեհների մեջ է, գարշահոտությունը՝ անտանելի: Մոտավոր հաշվարկներով՝ աղբի ծավալը հասնում է շուրջ 2 միլիոն տոննայի:

KfW բանկի ֆինանսական աջակցությամբ եւ ՀՀ ՏԿՀՆ (հիմա՝ ՏԿԵՆ) համակարգմամբ՝ մշակվել է «Կոշտ թափոնների ինտեգրված կառավարման համալիր» ծրագիրը: Նպատակն էր՝ ստեղծել թափոնների կառավարման մի համակարգ, որը կներառեր Վանաձորի եւ հարակից համայնքների բոլոր տեսակի թափոնների հավաքումն ու տեղափոխումը: Պետք է բարձրանար ծառայությունների որակը, թափոններն անվտանգ տեղափոխվեին ժամանակակից չափորոշիչներին համապատասխան նոր սանիտարական աղբավայր, ներդրվեին աղբի նվազեցման, վերամշակման եւ կրկնակի օգտագործման մեխանիզմներ:

Նախատեսվում էր նոր աղբավայրի նախագծում եւ կառուցման վայրի ընտրություն, մասնավոր հատվածի ներգրավման հնարավորության գնահատում (աղբյուր՝ Վանաձորի 2017-2021 թթ. հնգամյա զարգացման ծրագիր): Այս հետազոտությունները պետք է հիմք հանդիսանային KfW բանկի ֆինանսավորման վերջնական որոշման համար: Վանաձորը պիտի ունենար ժամանակակից աղբահանման տեխնիկա, եվրոպական չափանիշներին համապատասխան տեսակավորող տարողություններ, եւ պիտի սկսվեր նոր աղբավայրի կառուցումը: Թմբկահարվում էր, որ կնվազեն մեթանի եւ ածխաթթու գազի արտանետումները, կկիրառվեն աղբավայրային գազի որսման եւ օգտագործման մեթոդներ: Չմոռանանք նաեւ աղբավերամշակման գործարանի կառուցման խոստումները:

Բայց ընթերցողն արդեն նկատել է՝ «ենթադրվում էր», «նախատեսվում էր», «պիտի սկսվեր», «պիտի կիրառվեր»: Այս ամենն այդպես էլ իրականություն չդարձավ: Որքա՞ն գումար է ծախսվել այդ «հրաշք» ծրագրերի մշակման վրա՝ անհայտ է: Ինչո՞ւ չեն իրականացվել՝ նույնպես: Կառավարության նիստում վարչապետը կարեւորել է աղբի հավաքման, կառավարման եւ վերամշակման ամբողջական շղթայի ձեւավորումը, հանձնարարել է խթանել ոլորտում գործող ընկերությունների գործունեությունը, շարունակել ռազմավարական աշխատանքները եւ սեղմ ժամկետում ներկայացնել համապարփակ ռազմավարություն՝ հստակ ժամանակացույցով: Իսկ կառավարությունը հետեւողական եղե՞լ է, վերադարձե՞լ է իր իսկ որոշումներին ու հանձնարարություններին: Տեսնելով Արջուտի աղբավայրից վեր բարձրացող գարշահոտ ծխի հորդահոս քուլաները՝ պատասխանը մեկն է՝ ոչ: Իսկ ինչո՞ւ… Անիմանալի են գործերը մեր կառավարության:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ
Լոռի

ԳՈՐԾ ՈՒՆԵՆՔ ԲԱՑԱՀԱՅՏ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՏ



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Hraparak.am-ը գրել էր, որ դեկտեմբերի 5-ից կալանքի տակ գտնվող Արշակ սրբազանի քրեական գործում տրագիկոմեդիկ զարգացումներ կան, եւ նախաքննության մարմինը խուճապի մեջ է: Պարզվում է, մեղադրանքի համար հիմք հանդիսացող միակ «իրեղեն ապացույցը»՝ թմրախոտի գլանակը, Արմավիրի մարզային քննչական վարչությունից անհետացել է: 7 տարվա հնության այդ գլանակը կամ քննիչներն են ծխել, կամ անփութության հետեւանքով կորցրել են՝ գործի պատվիրատուներին զրկելով միակ ապացույցից: Հիշեցնենք, որ, ըստ մեղադրանքի, ինչ-որ մեկի ուսապարկից իրավապահները գտել են թմրանյութի գլանակ, որը, գործով անցնող վկաների «կարծիքով», կարող էր Արշակ սրբազանի հանձնարարությամբ հայտնվել ուսապարկում:

Մեզ ասացին, որ գործը քննող քննիչները, ինչպես նաեւ վարչության պետը, ահը սրտներում սպասում են, որ պատժվելու են՝ գուցե անգամ աշխատանքից ազատվեն, որովհետեւ չկա իրեղեն ապացույցը՝ չկա գործը: Ի դեպ, երեկ քննչականի խոսնակը, որը ցանկացած լուր հերքելու մեծ մասնագետ է, երեկ հրաժարվել է մեկնաբանել մեր հրապարակումը: Հայտնի է, որ Արշակ արքեպիսկոպոսին կալանավորելու հրահանգն ուղիղ վարչապետից է իջեցվել, ուստի բոլորը գիտակցում են այդ գործի կարեւորությունը, ակնհայտ է, որ սա քաղաքական հետապնդում է, բայց նվազագույն ձեւական ապացույցներ պետք է առկա լինեն, որ կարողանան գործը դատարան ուղարկել, մեղադրյալին էլ բանտում պահել:

Փաստաբան **Միհրան Պողոսյանից** հետաքրքրվեցինք՝ ի՞նչ նախադեպ է սա եւ ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ: Նա ասաց. «Ակնհայտ է, որ եթե պրոցեսը հավասար պայմաններում դիտարկեինք, ապա թմրամիջոցների իրացման հանցակազմի պարագայում, եթե իրացման առարկա առկա չէ, ապա անհնար է դառնում դրա չափի մասին խոսելը: Եթե իրավական մաթեմատիկային՝ տրամաբանությանն ենք նայում, ապա ինչ-որ մեկը ցուցմունք է տվել, որ ինչ-որ մեկից ձեռք է բերել թմրամիջոց, կամ ինչ-որ մեկն իր պայուսակի մեջ թմրամիջոց է գցել եւ այլն: Թմրամիջոցի առկայությունը միայն կարող է հստակեցնել, թե ինչ հոդվածի մասին պետք է խոսք գնա, եւ ըստ դրա միայն կայացվի որոշում: Եթե չկա ապացույց, ապա չեն կարող ասել՝ թմրանյութի չափը զգալի՞ էր, առանձնակի՞ զգալի էր, թե՞ խոշոր չափերով: Չկա ապացույց, չկա թմրանյութի չափ: Սա իրավաբանական թեորեմ է՝ եթե չկա ապացույց, ապա պետք է խոսվի ամենանվազ չափի մասին, բայց ես կարծում եմ, որ այս գործի շրջանակներում այս տրամաբանությունը չի գործելու: Ես հենց Ձեզ հետ զրույցում էլ նախորդ անգամ առիթ ունեցել եմ ասելու, որ իշխանության հիմնական նպատակն այս գործում այն է, որ Արշակ սրբազանի անունը հասարակության հիշողության մեջ ասոցացվի թմրանյութերի հետ: Սրբազանն օգտագործե՞լ է թմրանյութ, թե՞ չի օգտագործել՝ սա իշխանական քարոզչության համար գլխավոր հանգամանք չէ: Ամեն դեպքում, իրացված թմրամիջոցի բացակայությունը խոսում է այդ հոդվածի ամենանվազագույն մասի մասին»:

Հարցին՝ ինչպե՞ս կարող է իրավապահ կառույցից ապացույց անհետանալ, Պողոսյանն ասաց. «Մենք այդ առումով չպետք է զարմանանք, քանի որ սա նորություն չէ: Գումարից սկսած մինչեւ ամենահասարակ բաները կարող են անհետանալ իրավապահների ձեռքից: Վերջերս քննչական մարմնից անհետացել էր իրեղեն ապացույց հանդիսացող 500 հազար դոլարը: Այդ մասին հանրությունն իմացավ, քանի որ խոսքը բավականին մեծ գումարի մասին էր, նման դեպքեր էլի են լինում, սակայն ոչ միշտ է այդ մասին աղմուկ բարձրանում: Մեր իրավապահ մարմինների համար իրենց իսկ տարածքից գողության դեպքերը դարձել են սովորական երեւույթներ, կարող ենք շատ տարբեր վարկածներ մտածել, արդյո՞ք գողություն է կատարվում, գուցե անփութությո՞ւն է, գուցե դիտավորությո՞ւն: Ամեն դեպքում, նախորդ Քրեական օրենսգիրքն իրեղեն ապացույցների ոչնչացումը կամ փոփոխությունը նախատեսում էր որպես քրեական հանցագործություն: Հիմա նույնպես իրեղեն ապացույցի անհետացումը քրեական հանցագործություն է, սա կարող եմ պնդել, սակայն նոր օրենսգրքում ապացույցի անհետացումը չի համարվում քրեական հանցագործություն»:

Փաստաբան **Հայկ Ալումյանն** էլ, անդրադառնալով թեմային, ասում է. «Եթե իրականում ապացույցն իսկապես անհետացել է, ապա նախ պետք է հասկանալ, թե ինչպես: Ո՞վ է այն իր տեղից վերցրել, իսկ հետո անպայման պետք է պարզել այդ քայլի շարժառիթը: Գործ ունենք բացահայտ հանցագործության հետ, սակայն, թե այն ինչ որակում կստանա, կախված է լինելու այն բանից, թե թմրամիջոցներն իրացնող անձն ինչ շարժառիթ է ունեցել: Որակման առումով շատ բան շարժառիթից է կախված: Եթե չկա ապացույցը, բնականաբար, փորձաքննություն դրա հիման վրա չի կարող իրականացվել, եթե, իհարկե, նախքան անհետացման պահը չի իրականացվել փորձաքննություն: Իսկ եթե փորձաքննություն չի իրականացվել, հնարավոր չի լինի պնդել, որ այն հենց թմրամիջոց է եղել, այլ ոչ թե այլ զանգված: Եթե ամեն ինչ այդ տրամաբանությամբ գնա, անձին այլեւս չեն կարող մեղադրել: Քննչական մարմինների ձեռքից ինչ-որ բան անհետանալը եզակի դեպք է, ասեմ, որ իմ գործունեության ընթացքում ավելի շատ դեպքեր են եղել, որ ինչ-որ բան է հայտնվել քննչականի ձեռքում, այլ ոչ թե կորել է»: Ի դեպ, մեզ ասացին նաեւ, որ եթե անգամ ժամանակին փորձաքննություն արվել է, ապա նման գործերում, որպես կանոն, կրկնակի փորձաքննություն է նշանակվում, եւ միայն կրկնակի փորձաքննության արդյունքում կարող են մեղադրանք առաջադրել ու մեղադրական դատավճիռ կայացնել, իհարկե, եթե մեղադրանքի մյուս պահերը, օրինակ՝ վկաների ասածները, այլ ապացույցներով հաստատվեն:

ՀԱՅՏԻՊ

ԱՌՆՎԱԶՆ 300 ՏԱՐԻ ՄՆԱՑԵԼ ԵՆՔ ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ԵԹԵ ՈՉ ԱՎԵԼԻ ԵՐԿԱՐ

«Սա մորալ օրենքներից զուրկ պետություն է, հարգելի բարեկամներ: Սա ՄՕԶանոց է: Նման պետությունը ոչ միայն իրավունք, այլեւ շանս չունի գոյատեւման: Երանի այն օրը, երբ հայը կազատվի հայից: Տա Աստված՝ հայն ազատե, իսկ եթե ոչ՝ թող օտարն ազատե, ու թող օրհնվի այդ օրը»: Այս տողերի հեղինակը նախկին ՔՊ-ական Արթուր Համբարձումյանն է: Երբ կարդացի նրա այս ֆեյսբուքյան գրառումը, հիշեցի Խաչատուր Աբովյանի «Օրհնվի էն սհաթը, երբ ռսի ոտը Հայոց լիս հողը մտավ» հայտնի տողը:

Խաչատուր Աբովյանը ռուսներին համարում էր ազատարարներ, ոչ թե այն պատճառով, որ չէր գիտակցում, որ պարսկական տիրապետությունը փոխարինվել է ռուսականով, նա ուղղակի համեմատում էր այդ երկու տիրապետությունները եւ դրանցից նախընտրելի էր համարում ռուսականը: Ռուսական տիրապետության տակ հայերը հնարավորություն ունեցան ունենալ ազգային դպրոց, Աբովյանը դպրոցական տեսուչ էր, զարգացնել սեփական գրականությունը, մշակույթը, մի բան, որ պարսկական տիրապետության տակ անհնար էր: Արթուր Համբարձումյանը եւս հասկանում է, որ օտարի կողմից ազատում չի լինում, լինում է մի տիրապետության փոխարինում մեկ այլ տիրապետությամբ, բայց նա վստահ է, որ այն, ինչ կա այսօր, ամենավատթարն է հնարավորից, որ ցանկացած այլ տիրապետություն դրանից ավելի լավ է լինելու:

Ինչո՞ւ են էթնոսները, ժողովուրդները ձգտում ինքնուրույնության, անկախության, որովհետեւ միայն անկախ պետությունն է, որ տվյալ էթնիկ խմբին, ժողովրդին, դրան մաս կազմող յուրաքանչյուր անհատին հնարավորություն է տալիս առավելագույնս պաշտպանել իր քաղաքական եւ տնտեսական իրավունքները, պաշտպանել ազգային ինքնությունը, ինչն անհնար է օտարի տիրապետության պայմաններում, որովհետեւ օտարը որքան էլ բարի, լայնախոհ ու հանդուրժող լինի, միեւնույն է՝ դոմինանտ էթնոսը միշտ ճնշելու է մյուսներին, սահմանափակելով նրանց իրավունքները: Միայն մի փոքր օրինակ. Ռուսաստանի Դաշնության զինանշանի վրա կա քրիստոնեության սիմվոլ խաչի պատկերը, ՌԴ-ն բազմազգ եւ բազմակրոն պետություն է, դրան մաս կազմող հանրապետությունների մի մասն իսլամադավան է, կան նաեւ բուդդայականություն դավանող էթնոսներ եւ ազգային ինքնավարություններ, որոնք փորձում են իրենց տարածքներում գերբը պատկերել առանց խաչի, բայց Ռուսաստանի իշխանությունը դա թույլ չի տալիս, որովհետեւ երկրի զինանշանն ընդհանուր է բոլորի համար, իսկ ուղղափառ քրիստոնեությունը համարվում է այդ երկրի պետականաստեղծ տարրերից մեկը:

Ինչո՞ւ են Հայաստանի փրկությունը տեսնում դրսում, դրսի ուժերի կողմից կամ օժանդակությամբ. պատճառը մեկն է՝ սեփական ուժերով դրան հասնելու անհնարինության գիտակցումը, փակուղում լինելու եւ դրանից ելք չգտնելու արձանագրումը: Մարդկանց մի մասը մտածում է, որ Հայաստանը գտնվում է ամերիկա-թուրքական տիրապետության տակ, եւ Հայաստանի այսօրվա կառավարիչները չեն արտահայտում հայ հասարակության, նրա անդամների շահերը, նրանք առաջնորդվում են բացառապես ամերիկա-թուրքական շահերով, Հայաստանի տարածքը զիջում են ամերիկա-թուրքական դաշինքին, ոչ թե այն պատճառով, որ դա պետք է Հայաստանին, կամ այդպես է պահանջում Հայաստանի կամ հայ հասարակության շահը, այլ՝ որովհետեւ այդպես է պահանջում ԱՄՆ-ի եւ Թուրքիայի շահը: Հայաստանում հարձակում է իրականացվում Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ՝ դարձյալ դրսի թելադրանքով, աղճատվում եւ վերախմբագրվում են Հայաստանի պատմությունը, կրթությունը, մշակույթը՝ դարձյալ դրսի թելադրանքով, Հայաստանի տնտեսական շահերը ստորադասվում են այլ երկրների տնտեսական շահերին. Ադրբեջանը եւ Թուրքիան Հայաստանը վերածում են իրենց ապրանքները վաճառելու շուկայի՝ Հայաստանը ենթարկելով դաժան տնտեսական շահագործման, իսկ կառավարիչները դարձել են նրանց շահերի առաջմղման գործիք:

Մարդիկ հարցնում են՝ իսկ ինչպե՞ս է հնարավոր ազատվել դրսի կառավարիչներից, չէ՞ որ նույն ԱՄՆ-ը, Եվրամիությունը, Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Ադրբեջանն իրենց բացահայտ աջակցությունն են հայտնում Փաշինյանի իշխանությանը: Արդյո՞ք ընտրությունների միջոցով հնարավոր է լինելու ազատվել օտարի դրածոներից, արդյո՞ք ընտրությունները տալիս են նման հնարավորություն: Արթուր Համբարձումյանը եւ հայ հասարակության ճնշող մեծամասնությունը չունի այդ հարցի պատասխանը, բայց նրա ասածի իմաստն այն է, որ եթե ընտրություններով հնարավոր չեղավ ազատվել սրանցից, եթե հայն ինքնուրույն չկարողացավ ազատագրվել, միակ հույսը մնում է օտարի կողմից ազատագրվելը, ավելի ատելի տիրապետությունն ավելի տանելի տիրապետությամբ փոխարինելը: Բայց երբ հույսը մնում է օտարի կողմից «ազատագրվելը», մնում է գնալ Իսրայել Օրու ճանապարհով՝ գնալ այլ մայրաքաղաքներ եւ սկսել համոզել, որ գան եւ ազատագրեն աշխարհի ամենաքրիստոնյա եւ ամենաճնշված ժողովրդին: Ստացվում է՝ առնվազն 300 տարի մնացել ենք նույն տեղում, եթե ոչ ավելի երկար:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ո՞Վ Է ԱՎԵԼԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ

Լինում են, չեն լինում՝ երկու վարչապետ են լինում... Չէ, լավ չստացվեց: Երեւի պիտի եզակի թվով գրեի՝ լինում է, չի լինում՝ երկու վարչապետ է լինում: Սա էլ մի բան չի, լավ չի հնչում: Բա ո՞նց անենք... Արի՝ նրանց մասին առանձին-առանձին գրենք:

Եվ ուրեմն՝ լինում է, չի լինում՝ մի վարչապետ է լինում: Էս վարչապետի հոգին շատ խորն է լինում: Ու քանի որ հոգին շատ խորն էր, ձեռքն էլ մաքուր չէր: Աչքածակ էր մի ուրիշ տեսակ: Քանի ջահել էր ու վարչապետ չէր, տուն էր պահում տարատեսակ աշխատանքներով՝ շանտաժ, ահաբեկչություն (զուտ վախեցնելու իմաստով), խառնակչություն, մանիպուլյացիաներ, խժդժություններ... այս ամենը նրա ոչ միայն մասնագիտական գործունեության տարրերն էին, այլեւ՝ կենցաղի: Ասել՝ հաջողությունների չէր հասել, ճիշտ չի լինի: Լավ չեմ հիշում՝ որ թիվն էր, բայց այս ապագա վարչապետը հաջողեցրեց յուղ լցնել ցուցարարների եւ ոստիկանների կռվի վրա... 10 մարդ զոհվեց, բայց ինքն այնպես անհետացավ, որ երկար ժամանակ հետքը չէին գտնում: Վերջը եկավ, հանձնվեց, տարան բանտ: Հանրությունն արդեն սկսել էր մոռանալ այդ եզակի երեւույթին, մեկ էլ իմացանք, որ ինչ-որ երկխոսության արդյունքում նրան պատգամավոր են դարձրել եւ բերել Ազգային ժողով: Ոչինչ չէր փոխվել նրա կյանքում, բացի շորերը... Կաստում-շլվարով էր արդեն գործի գնում, փողկապ էր կապում, բայց հենց ԱԺ ամբիոնի մոտ բերանը բացում էր, դառնում էր նույն շանտաժիստը, ահաբեկիչը (զուտ վախեցնելու իմաստով), խառնակիչը, մանիպուլյանտը, խժդժիչը... Մարդիկ սկսեցին հարց տալ միմյանց՝ ո՞վ բերեց սրան ԱԺ, ինչո՞ւ բերեց... Այս հարցերի պատասխանները դեռ չկային, մեկ էլ պարզվեց, որ հաջորդ ԱԺ-ում էլ է լինելու, բայց արդեն՝ սեփական ֆրակցիայով: Եվ դարձյալ հարցեր՝ ո՞նց, ո՞վ, ո՞վ է նրա թիկունքին, ո՞վ է բրթում... Ո՞նչ իմանայինք, որ ամեն ինչ դեռ նոր էր սկսվում, ու գլխներիս մեծ զուլում էր գալիս: Մնացածը, թե ինչպես դարձավ վարչապետ, ինչեր խոստացավ, ինչեր արեց, չեմ պատմի՝ տեղի խնայողության նպատակով: Մարդիկ արդեն ամեն ինչ գիտեն, ամեն ինչ զգացել են իրենց կաշվի վրա: Բայց, ինչպես արդեն ասացի, սրա հոգին շատ խորն է, ու եթե չգնաց, էլի բաներ է անելու՝ իր ղեկավարած երկրում ապրելն անհնարին դարձնելու ուղղությամբ: Նրա վերջին քայլերն այդ մասին են խոսում՝ քանդել հազարամյակների Եկեղեցին, մսխել երկրի բյուջեն մինչեւ վերջ, բանը հասցնել դեֆոլտի ու թռնել՝ ուր աչքը կտրի: Սկզբունքն էլ սա է՝ կամ ինքը կլինի վարչապետ, կամ երկիրը վարչապետ չի ունենա: Չքավոր ժողովրդի աչքի առաջ միլիարդներով պարգեւավճարներ տալ սեփական թիմին, սեփական աշխատավարձը միլիոններով ավելացնել, փողատերերին կզացնել, բացառիկ մենաշնորհներ տալ սեփական օլիգարխներին... Այսօր այս ոլորտներում է խորացել, եւ դա, ինչպես վկայում է բազմաթիվ երկրների փորձը, վարչապետների վերջին ստադիան է:

Եվ հանկարծ, ԱԺ նոր ընտրություններից առաջ հայտնվում է մի ուժ, որի առաջնորդը հայտարարում է, որ այդ ուժի հաղթանակի դեպքում վարչապետը ստանալու է 1 դրամ խորհրդանշական աշխատավարձ: Պատկերացնո՞ւմ եք էն վերեւում նկարագրված վարչապետի եւ նրա կաբինետի անդամների վիճակը: Իրենք՝ մեղրի կարասի մեջ, հանկարծ այսպիսի բան են լսում: Հոսանքահարված մարդը դեռ փառք է... Կողքերն է նայում էշացած, չգիտի ինչ կատարվեց, ինչու, ինչպես... Սրանք, սակայն, սկսել են քննարկել այդ առեղծվածը՝ չի կարող պատահել, բա այդ նոր վարչապետն ինչո՞վ է ապրելու, ինչպե՞ս է տուն պահելու, եթե բյուջեն չլափի: Այծի մորուքով մեկը կա, բրիֆինգ է արել, թե դա շատ վտանգավոր հայտարարություն է, ո՞նց թե 1 դրամ, սա պետություն է, ի վերջո, պետությունը պետք է լավ մասնագետը ղեկավարի, իսկ լավ մասնագետը չի կարող այդ գումարով որակյալ կառավարում իրականացնել: Կարելի է մտածել՝ իրենք միլիարդների պարգեւատրումներով ու մի քանի միլիոնանոց աշխատավարձերով երկիրն այնպես են կառավարել, որ այն որեւէ պրոբլեմ չունի այլեւս:

Կարճ ասած՝ խնդիրը դարձրին ազգային անվտանգության հարց ու իրենց կարճ խելքով, հավանաբար, մտածում են, որ ժողովուրդը կհավատա այդ ցնդաբանությանը: Ժողովուրդը, ախր, իրենց պես չի մտածում: Ժողովուրդը հիմա «որոճում» է 2018 թվին իր գլխով անցածը, հատհատ հիշում այն բոլոր խոստումները, որ այս վարչապետը տվեց ու չարեց՝ խաբեց, մանիպուլացրեց, ֆռռացրեց: Այսպիսի բան, որ ժողովուրդն անգամ իր մղձավանջային երազներում չէր տեսել, տեսավ որպես իրականություն:

Հեքիաթը փոխվեց... Լինում է, չի լինում՝ մի վարչապետ է լինում: Էս վարչապետն օրնիբուն աշխատում էր ու ստանում ընդամենը 1 դրամ աշխատավարձ, որ կարողանա երկիրը հանել անդունդից, այն նույն անդունդից, որի մեջ հայտնվել է ոչ միայն էն վերեւի վարչապետի ձեռամբ, այլեւ ժողջանի հիմար խելքից... Չմանրամասնենք: Փառք տանք Աստծուն, որ կործանիչներին քիչ ժամանակ մնաց եւ շուտով ռադ կլինեն մեր կյանքից: Իսկ նոր վարչապետին, ով էլ լինի, ասենք, որ հասարակ քաղաքացիները սիրում են, երբ թալանչիներից փողերը խլում եւ բաժանում են իրենց: Սա նկատի ունեցեք եւ մինչեւ սրանց պարգեւատրումներն ու միլիոնանոց աշխատավարձերը ձեռքներից չառնեք, չփորձեք ինքներդ մեկ դրամից ավելի աշխատավարձ ստանալ:

ՀԳ. *Ենթադրենք, ունենք երկու վարչապետ: Նրանցից ո՞վ է ավելի վտանգավոր. միլիարդները փոշիացնո՞ղը, թե՞ 1 դրամ խորհրդանշական աշխատավարձ ստացողը...*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԵՐԿՈՒ ԱՆՇՈՒՆՉ ԼԻՃ, ԵՐՐՈՐԴԻ ԲԵՐԱՆՈՒՄ ԷԼ ԻՍԿԻ ՇՈՒՆՉ ՉԿԱ

ՎԱՆԱՁՈՐ

Խոսքը երեք լճակների մասին է, որոնք մի ժամանակ հանրապետության երրորդ քաղաք Վանաձորին գույն ու ուրույն նկարագիր էին հաղորդում: Այսօր այդ պատկերն այլեւս չկա: Մնացել է միայն հիշողությունը՝ խամրած, ջնջվող, ինչպես հենց լճակները՝ իրենք: Երկուսն արդեն անշունչ են՝ ջուրը վաղուց լքել է նրանց: Մնացել են մարդաբոյ խոտը, վայրի թփերն ու ծառերը, որոնք ավելի շատ հիշեցնում են լքված տարածք, քան քաղաքի «սիրտ»: Երրորդ լճակում վիճակը փոքր-ինչ այլ է՝ այնտեղ ջուր կա, բայց դա դժվար է ջուր անվանել՝ սրճագույն, դոնդողանման զանգված:

Այս լճակները պատահական չէին ծնվել: Դրանք կառուցվել էին այն տարիներին, երբ Վանաձորի քիմիական գործարանը հզորանում էր, ընդլայնում արտադրությունը եւ տեխնիկական նպատակներով մեծ քանակի ջրի կարիք ուներ: Մոտակայքում էին Տանձուտ եւ Վանաձոր գետերը: Կարելի էր մեկ լճակ կառուցել՝ ջուրը գործարան հասցնել, բայց գործարանի խնդիրը լուծելուց բացի, որոշվեց նաեւ քաղաքին հիանալի նվեր մատուցել. 3 լճակ կառուցվեց: Կառուցվեց նաեւ պոմպակայան: Դրանց շնորհիվ գործարանը ստացավ արտադրական լուծում, քաղաքն էլ՝ բարեկարգ ու գողտրիկ մի անկյուն, անվտանգ գետեր, Շահումյան հրապարակ՝ զարդարված աշխատանքը փառաբանող քանդակազարդ պաննոյով: Տարածքը կարճ ժամանակում դարձավ քաղաքացիների սիրելի հանգստավայրերից մեկը:

Արեւելյան լճակը նախատեսված էր լողալու եւ նավակներով զբոսնելու համար: Զբոսուղիներն էլ՝ ծառախիտ, զով ափերով ու ջրերի վրա կախված երկար կամուրջներով: Մետաղե բազրիքները գեղեցկացնում էին համայնապատկերը եւ ապահով դարձնում երթեւեկը: Ջրերը մի լճակից ջրվեժում էին մյուսի մեջ: Հեքիաթային տեսարան էր: Այսօր այդ հեքիաթը վերածվել է դառն իրականության:

Երկու լճակները վաղուց անջուր են: Միջին լճակով արդեն տասնյակ տարիներ հոսում են մոտակա թաղամասի վթարված կոյուղու կեղտաջրերը: Երրորդում, ճիշտ է, դեռ ձկներ կան, եւ մարդիկ որսում են՝ զբաղմունքի համար, բայց ուտել չեն կարող: Լոռեցիները փորձել են բռնած ձուկը մեկ-երկու շաբաթ պահել աղբյուրի քաղցրահամ ջրի մեջ՝ հույս ունենալով, որ անտանելի հոտը կվերանա՝ չի վերացել: Ձուկը նետել են կատուներին, կատուներն էլ չեն կերել:

Լիճ չէ՝ գարշահոտ ճահիճ է քաղաքի կենտրոնում: Սեւացած, մածուցիկ տիղմը մոտեցել է մակերեսին: Ջրի վրա լողում են ճահճախոտի ու կենցաղային աղբի նմուշներ: Ժամանակներ առաջ, երբ երկու տարին մեկ լճակները դատարկում էին, տիղմը մղաններով ու տեխնիկայով հեռացվում էր անվտանգ վայր: Վերջին 30-35 տարիներին նման խնամք չի եղել: Քիմիագործների բարի գործը գլխիվայր շրջվել է ու դարձել չարիք քաղաքի համար:

Լճակները ոչ միայն խաթարում են քաղաքի երբեմնի գեղեցկությունը, այլեւ իրական վտանգ են ներկայացնում բնակիչների առողջության համար: Դրանք հեռու չեն Առողջարանային եւ Աղյուսագործների խիտ բնակեցված թաղամասերից: Լճակներից մոտ հարյուր մետր հեռավորությամբ տուն ու պարտեզ ուներ ՀՀ վաստակավոր դերասան Վրույր Հարությունյանը, որի դժգոհությունը հաճախ եմ լսել. «Գարշահոտից, կրծողներից ու մոծակներից պրծում չունենք: Ասես պայթուցիկ նյութերի տակառի վրա ապրենք: Լրագրողներ եք՝ գրեք, էլի»: Գրում ենք, ահազանգում ենք: Հավելենք. խնդիրը միայն հոտը չէ: Զբոսուղիները տարիների ընթացքում մաշվել են, տեղ-տեղ՝ ամբողջությամբ քանդվել, դարձել վտանգավոր, սակայն մարդիկ դեռ քայլում են: Եթե մի հատված որոշի փլվել, մարդը երեք մետրից կհայտնվի ճահճաջրի մեջ, գուցե անգամ ողջ չմնա:

Քիմգործարանը, որը տարիներ շարունակ խնամում էր այս տարածքը, այլեւս չկա: Փակվեց, թալանվեց, վերանում է քաղաքային քարտեզից: Տեղական իշխանությունները հերթագայում են իրար, բայց լճակների ճակատագիրը նրանցից ոչ մեկի օրակարգում չի հայտնվում: Եղածը վերականգնելը բարդ է, բայց գոնե պահպանել հնարավոր է: Կոյուղու վթարը վերացնել հնարավոր է: Միակ ջրով լի լիճը գոնե մեկ անգամ մաքրել՝ նույնպես:

Սակայն պատմությունն այստեղ չի ավարտվում: Վանաձորում արդեն եղել է նման մի կորուստ: Սանկտ Պետերբուրգի խճուղու 3–3,5 կիլոմետրանոց հատվածը կառուցվել էր Տանձուտ գետի աջակողմյան մասում՝ նաեւ Երեւանյան խճուղին ծանրաբեռնվածությունից ազատելու նպատակով: Այն համարվում էր դեպի մայրաքաղաք տանող այլընտրանքային ճանապարհ: Այսօր այնտեղ ասֆալտի հետք անգամ չեք հայտնաբերի: Ոչ միայն ճանապարհը չկա, այլեւ նրա գոյության մասին հիշողությունը. քաղաքի քարտեզից խճուղին պարզապես ջնջվել է: Ոչ մի աղետ: Ոչ մի երկրաշարժ: Միայն տարիների անտարբերություն՝ «բարձր սեյսմիկության» պայմաններում:

Հենց նույն անտարբերությամբ են այսօր ջնջվում լճակները: Դանդաղ, անաղմուկ, գրեթե աննկատ: Ամեն տարի մի քիչ ջուրը, ճեմուղիները, մի քիչ՝ ափը, բազրիքները, մի քիչ՝ հիշողությունը: Մի քանի տարի եւս, եւ Վանաձորի լճակները պարզապես չեն լինի: Ոչ թե որովհետեւ հնարավոր չէր փրկել, այլ որովհետեւ այդպես էլ չգտնվեց մեկը, ով պարտք կհամարեր դա անել: «Երկար փնտրտուքից» հետո ինձ հաջողվեց պարզել մի բան. Վանաձորը տեղական իշխանություններ, այնուամենայնիվ, ունեցել է՝ դրանք անգամ իրար հերթագայել են: Քաղաքապետեր է ունեցել: Բայց այս քաղաքը, ցավոք, չի ունեցել իր ժողովրդին ծառայող իշխանություն ու տեր:

Հակառակ դեպքում հնարավոր էր, որ քաղաքի կենտրոնում լճերը վերածվեին ճահճի: Հնարավոր էր, որ ռազմավարական նշանակության ճանապարհը պարզապես անհետանար: Հնարավոր էր, որ հանրային հարստությունը ոչ մեկի հոգսը չլիներ: Մնում է միայն ափսոսալ ու հարց տալ. ինչո՞ւ ենք մեր հարստությունների նկատմամբ այսքան անհոգ ու անտարբեր: Որքա՞ն պիտի կորցնենք, մինչեւ հասկանանք՝ կորուստը միշտ սկսվում է անտարբերությունից, լռությունից:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ
Լոռի

ԻՆՉՊԵՍ Է ՌՈՒՍԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍԵԼ ՏԱՐԻՆ

Սանկցիաները եւ մի քանի տարի տեւած սահմանափակ վարկավորումը ռուսական տնտեսության մի շարք ոլորտներում նկատելի անկման են հանգեցրել, եւ այդ վիճակով է ընթացիկ տարին սկսել հետխորհրդային խոշորագույն տնտեսական համակարգը: Կառավարությունը վիճակը շարունակում է ներկայացնել որպես «կառավարվող սառեցում», սակայն պաշտոնական ներքին փաստաթղթերն ու զեկույցները, որոնք շրջանառվում են ՌԴ ֆեդերալ կառավարության եւ Կենտրոնական բանկի աշխատասենյակներում, արձանագրում են, որ տուժած ոլորտներում իրավիճակը դժվար թե այս տարի շտկվի: Այս մասին է ահազանգում նաեւ «Независимая газета»-ն: Ավելին՝ ակնկալում են, որ շարունակվելու է ներդրումային անկումը, արդյունաբերական պրոցեսները շարունակելու են դանդաղել, պահպանվելու է դրամավարկային կոշտ քաղաքականությունը, ինչպես դիտարկում է Nezigar կայքը: Այս իրավիճակում իշխանությունները որոշել են անցնել ըստ ոլորտների՝ տեղային աջակցության քաղաքականությանը: Դա, իհարկե, դժվար թե կարողանա փոխել մակրոտնտեսական հետագիծը, սակայն կա հույս, որ կարող են ճգնաժամային առավել սուր դրսեւորումները մեղմել: Որոշվել է, որ այս տարվա առաջին եռամսյակին՝ շաբաթական կտրվածքով, ներկայացվելու են այդ գործողությունները: Համաձայն վերլուծաբանների, արդեն որոշվել է, թե որ ոլորտները կարիք ունեն առաջնահերթ օգնության:

Դրանք են՝ գյուղատնտեսական մեքենաշինությունը, ավտոարդյունաբերությունը, թեթեւ պոլիգրաֆիական արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունը, կահույքագործությունը, ռետինե եւ պլաստմասսե իրերի արտադրությունը, սեւ մետալուրգիան, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, անտառարդյունաբերական համալիրը, ածխարդյունահանությունը, ինչպես նաեւ՝ սննդի եւ խմիչքների արդյունաբերությունները: Այս ոլորտներից ամեն մեկը կդիտարկվի առաջիկա շաբաթներին՝ կառավարական հատուկ հանձնաժողովի կողմից: Շատ վերլուծաբաններ եւ տնտեսագետներ տարակուսած են, որ, օրինակ, էներգետիկան, երկաթուղային տրանսպորտը, բնակարանային շինարարությունը եւ այլն՝ ուշադրությունից դուրս են մնացել: Կառավարական գիծը պաշտպանող փորձագետներն այս հարցերին ի պատասխան, փորձում են առաջ տանել այն թեզը, որ «ուշադրությունից դուրս մնացած» ոլորտներում առանձին քննարկումներ եւ առանձին հասցեական լուծումներ են նախատեսվում, դրա համար էլ դրանք առավել տուժածների ցանկում չեն ներառվել: Կասկածամիտները, սակայն, հակադարձում են, որ եթե ցանկը «բարեխղճորեն» եւ «ամբողջական» կազմվեր, ապա կընդգրկեր տնտեսության, թերեւս, բոլոր ոլորտներն ու ճյուղերը՝ բացառությամբ բանկային ոլորտի եւ ռազմական կամ նավթագազային արդյունաբերության:

Սա ցույց է տալիս, որ տնտեսական վիճակը Ռուսաստանում բավական լուրջ է, եւ նաեւ սրանով պետք է բացատրել այն, որ կառավարող շրջանակները փորձում են բանակցային սեղանի շուրջ առավել ընդունելի տարբերակներ գտնել՝ պատերազմն ավարտին հասցնելու համար:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բոլոր զինակոչիկներին իր գործած տաք գուլպաներն է նվիրում

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեվան գյուղի բնակչուհի Սեդա Գարդիշյանը համագյուղացի բոլոր զինակոչիկներին, ծառայության մեկնելուց առաջ, նվիրում է իր գործած ձմեռային տաք, գեղեցիկ գուլպաները, որոնց մեջ նա կոնֆետներ է լցնում: Ոսկեվանի միջնակարգ դպրոցում հավաքարար աշխատող կինը նվեր գուլպաները հանձնելով՝ զինծառայության մեկնողներին բարի ծառայություն եւ բարի վերադարձ է մաղթում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՉՈՐՍ ՀԱՐՑ՝ ՏԻՐԱԴԱՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ

ԹԻՖԼԻՍ

«Որքանով ես ճանաչել եմ եպիսկոպոս Միրզախանյանին, իր դիրքորոշումն ի սկզբանե եղել է այս ազգակործան հեղափոխությանը կողմ կանգնելը»,- «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով նախկինում վիրահայոց թեմի առաջնորդ, հիմա բալթյան երկրների թեմի առաջնորդ եւ Փաշինյանի հակաեկեղեցական պայքարին միացած Վազգեն Միրզախանյանին՝ ասաց վրահայ գործիչ **Գուրգեն Մխիթարյանը**: «Նա պաշտպանել է այս ազգակործան հեղափոխությունը, եւ այն, ինչ այսօր կատարվում է Հայաստանում՝ մեր Հայ առաքելական սուրբ եկեղեցու շուրջ, դա արդյունք է ազգակործան հեղափոխության: Այսօր տեղի ունեցողը տրամաբանական շարունակությունն է այդ հեղափոխության»,-ասաց նա:

Մխիթարյանին վրդովվեցրել է այն, որ վիրահայերի մեջ ոմանք Միրզախանյանին պիղծ են անվանում եւ նրա իրականացրած բոլոր պսակադրություններն ու մկրտություններն էլ են դրանով պղծում: «Որքան էլ Վազգեն Միրզախանյանը լինի վատ անձնավորություն, նա մինչ օրս վեղարակիր բարձրաստիճան հոգեւորական է՝ արքեպիսկոպոս, իրավունք չի տրված պախարակել ու անվանել պիղծ նրան... Եթե Մայր Աթոռը հարմար չի համարել կարգալույծ անել բարձրաստիճան հոգեւորականին, ես իրավունք չունեմ վեղարակիր հոգեւորականին կոչել աշխարհական անունով: Եթե ես վեղարակիր հոգեւորականին կոչեմ աշխարհական անունով, ապա ես ինչո՞վ եմ տարբերվում այն ստահակներից, ովքեր Վեհափառին աշխարհական անունով են անվանում: Ես էլ նրանց եմ հավասարվում, դառնում եմ նրանց նման: Դա՝ մեկ: Երկրորդը. մենք գտնում ենք, որ Վազգեն Միրզախանյանը միացել է հակաեկեղեցական արշավին, համաձայն եմ, նրա միացումն այս ազգակործան իշխանությանը շատ դատապարտելի է, բայց հարց է առաջանում՝ այսքան վարկաբեկումներից հետո ինչն է կանգնեցնում կաթողիկոսին՝ Միրզախանյանին ու մյուս տասը եպիսկոպոսներին կարգալույծ անի, ուրեմն, ինձ թվում է, Վեհափառն ինչ-որ բան գիտի եւ հատուկ կարգալույծ չի անում: Գուցե ինչ-որ ծրագիր կա, չգիտեմ... ինչ վերաբերում է Վազգեն Միրզախանյանին, նա շատ բարձր է այն մարդկանցից, ովքեր մասնակցել են ազգակործան հողափոխությանը եւ մինչեւ նոյեմբերի 9-ը պաշտպանել են Նիկոլ Փաշինյանին, քանի որ Փաշինյանի դիրքերը դեռեւս ամուր էին, հենց Փաշինյանի դիրքերը խարխլվեցին՝ այդ մարդիկ սկսեցին պաշտպանել Վեհափառին»,- շեշտեց Մխիթարյանը: Նա հարց է տալիս՝ ինչո՞ւ այն վիրահայերը, ովքեր այսօր պաշտպանում են Վեհափառին, չպաշտպանեցին նրան, երբ անմիջապես հեղափոխությունից հետո սկսվեց «նոր Հայաստան՝ նոր կաթողիկոս» շարժումը, որովհետեւ իրենք այդ հեղափոխության գաղափարակիցներն էին, ու դա եւս կազմակերպված էր իշխանության կողմից: Իսկ Վազգեն Միրզախանյանի դիրքորոշումը, ըստ Մխիթարյանի, «թշնամական է՝ դա ոչ թե դավաճանություն է, որ իրեն տիրադավ եք անվանում, այլ դա թշնամություն է, եթե ուղիղ խոսենք»:

«Մի բան կարող եմ ասել. ուսումնասիրելով եւ լսելով Վազգեն Միրզախանյանի քարոզները մեր եկեղեցիներում ու տաճարներում՝ Սուրբ Գեւորգ եւ Սուրբ Էջմիածնում, տաղավար տոներին եւ այլն, ես եկա այն եզրակացության, որ Վազգեն Միրզախանյանը եղել է կողմնակից էկումենիկ եկեղեցու ստեղծմանը: Գուցե սխալվում եմ, բայց ինձ մոտ իր քարոզներն այդ տպավորությունն են թողել: Ես համոզված եմ, որ սա ազգակործան հեղափոխության տրամաբանական շարունակությունն է, եւ այն մարդիկ, ովքեր հավատարիմ են մնացել այդ հեղափոխությանը, մինչ օրս շարունակում են այդ ազգակործան հեղափոխության գաղափարներն առաջ տանել, հաշվի չառնելով, թե Մայր Աթոռի ապագան ինչ կարող է լինել: Արցախատյաց, հայատյաց, պետականակործան, ազգակործան, սփյուռքակործան հեղափոխության՝ դա իմ կարծիքն է»,- ասում է վիրահայ գործիչը: Հայաստանի տարածքում ապրող 2,5 միլիոն հայությունն իրավունք չունի աշխարհով մեկ սփռված 11 միլիոն հայության ճակատագիրը որոշել՝ պնդում է Մխիթարյանը: «Տասը եպիսկոպոսը որոշիչ դեր չեն կարող ունենալ Հայաստանյայց առաքելական եկեղեցու պառակտման մեջ, քանի որ ՀԱԵ-ն ստեղծել է երկու աթոռ՝ պատմական իրավիճակներից ելնելով՝ հանուն ազգի փրկության, հանուն ազգի ինքնության պահպանման: Եկեղեցին չի պառակտվի»,- շեշտում է նա: Սակայն մի կարեւոր հանգամանք է նշում Մխիթարյանը՝ հեղափոխության որոշ աջակիցներ սկսել են պաշտպանել եկեղեցին, դա նշան է այն բանի, որ Փաշինյանի դիրքերը շատ են թուլացել: «Նմանները բանզդով են զգում, թե ով է հաղթում, ով է ուժեղ, դրա համար էլ անցել են եկեղեցու կողմը: Ինչո՞ւ ոչ ոք չէր բողոքում, երբ անմիջապես հեղափոխությունից հետո հարձակվել էին Մայր Աթոռի վրա, ուզում էին ցած իջեցնել խաչն ու դրա տեղը երկաթյա վարդ դնել՝ իբրեւ թե իրենց թավշյա հեղափոխության խորհրդանիշ: Նրանք Վազգեն Միրզախանյանի ու մյուս տիրադավների հետ կրում են ամբողջ պատասխանատվությունը, որի մեջ այսօր հայտնվել են հայ ազգն ու հայոց պետականությունը»,- հիշեցնում է զրուցակիցս:

Գուրգեն Մխիթարյանը հարց է ուղղում այդ տասը եպիսկոպոսներին եւ առաջին հերթին՝ Վազգեն Միզախանյանին. «Հարց առաջին. սրբազաններ, նախքան եպիսկոպոս դառնալը, վարդապետական տքնություն եք անցել Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրա՝ Օշական գյուղում: Մեսրոպ Մաշտոցը մեր եկեղեցու կողմից սրբադասված գիտնական ու հոգեւորական է, խնդրում եմ պարզաբանել ինձ եւ ամբողջ հայ ազգին՝ երբ որ Այբբենարանի վրայից հանվում է Սուրբ Մեսրոպ Մաշտոցի նկարը, դուք լա՞վ եք ձեզ զգում, երբ կանգնում եք այդ նույն ուժերի կողքը: Երկրորդ հարցը. Հովհաննավանքում այդ պիղծ պատարագին մասնակցել են Թիֆլիսից գնացած մարդիկ, որոնք հենց իրենք վարկաբեկել են Մայր Աթոռը՝ սկսած կաթողիկոսից, ավարտած Վազգեն Միրզախանյանով, դուք այսօր գտնվում եք այդ մարդկանց հետ միեւնույն ճամբարում, դա սազակա՞ն է ձեզ, թե՞ ոչ: Երրորդը. Վազգեն Միրզախանյանը հայտարարեց, որ գտնվում է պետականության, պետության պահպանման կողքին եւ այլն, բան չունեմ ասելու՝ պետությունը բոլորն էլ պարտական են հարգել, հատկապես՝ պետության բյուջեն հարկեր վճարողները, բայց ինչո՞ւ այն ժամանակ ինքը չկանգնեց պետության կողքին, երբ որ այս ազգակործան ուժերը քանդում էին մեր պետությունն ու մեր ազգը: Եվ չորրորդ հարցը. ինչպե՞ս են իրենք իրենց գնահատում այս ամեն ինչի մեջ, ես կուզեի լսել իրենց գնահատականը: Ես վստահ եմ, որ իրենք անպայման կկարդան ձեր թերթը, ու կցանկանայի լսել իրենց պատասխաններն իմ այս հարցադրումներին»:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՀԱԿՈԲ ՄՈՎՍԵՍՆ ՕՐԵՆՔ Է ԽԱԽՏԵԼ՝ ՆԱ ՊԵՏՔ Է ՀԵՌԱՑՎԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ

Անախորդ տարվա նոյեմբերին «Հայաստան» դաշինքը պահանջով հանդես եկավ՝ դադարեցնել Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի լիազորությունները: ՀՌՀ անդամ Հակոբ Հակոբյանը, նույն ինքը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի ժամանակների մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը, ըստ ընդդիմադիր պատգամավորների, խախտել է ՀՌՀ անդամի կարգավիճակից բխող քաղաքական չեզոքությունն ու զսպվածությունը, ինչը Սահմանադրությամբ է որոշված: Դաշինքը նրան ՀՌՀ անդամի լիազորություններից զրկելու նախագիծ է շրջանառել՝ ներկայացնելով իր պահանջի հիմնավորումները: Ըստ այդմ՝ Հակոբ Մովսեսն Առաջին լրատվականին տված հարցազրույցում Հայ հեղափոխական դաշնակցությանը վիրավորող ու վարկաբեկող մի շարք արտահայտություններ է թույլ տվել, ինչպես նախագծում է նշվում՝ «ՀՅԴ-ի նկատմամբ քարոզել է ակնհայտ ատելություն»: Հակոբ Մովսեսին պաշտոնազրկելու առաջարկի տեքստում մատնանշված են ՀՀ Սահմանադրության 197-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերը. «ՀՌՀ անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ որեւէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն: Պայմաններից որեւէ մեկը խախտելու դեպքում ՀՌՀ անդամի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով»:

Հակոբ Մովսեսն այդ պաշտոնում ընտրվել է ԱԺ-ի կողմից՝ 2022 թվականի հունվարի 22-ին: Դաշնակցական պատգամավոր **Լիլիթ Գալստյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ իրենց ներկայացրած պահանջի մասով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը եզրակացություն է ներկայացրել, համաձայն որի՝ հանձնաժողովն արձանագրում է, որ Հ. Հակոբյանի՝ սույն եզրակացության 1.3.2-րդ կետով ներկայացված խոսքը՝ այնքանով, որքանով այն պարունակում է քաղաքական կուսակցության ներկա գործունեության եւ գաղափարախոսության քննադատություն, հանգեցրել է վարքագծի կանոնագրքի 64-րդ կետի խախտման: Հիմք ընդունելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետը, 33-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 6-րդ մասերը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքները համակողմանի լրիվ եւ օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ եզրակացնում է.

1. ՀՌՀ անդամ Հակոբ Հակոբյանի կողմից վարքագծի կանոնի խախտման առկայության մասին:

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Հակոբ Հակոբյանին եւ Սեյրան Օհանյանին:

Լիլիթ Գալստյանն ասում է. «Փաստացի հակակոռուպցիոնն ընդունում է, որ խախտում է տեղի ունեցել: Հակոբ Մովսեսը պետք է ներկայանա Ազգային ժողով, եւ այդ հարցը քննարկվի: Այն արդեն տեղ է գտել ԱԺ նախագծերում: Հակոբ Մովսեսը Դաշնակցության, Հայ առաքելական եկեղեցու հասցեին տարատեսակ գնահատականներ է տվել, որոնց իրավունքն ի պաշտոնե չունի»:

Դաշնակցական պատգամավոր **Քրիստինե Վարդանյանն** էլ, մեզ հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասաց. «Հակոբ Մովսեսը չի ներկայացել, այդ հիմքով հետաձգվել է նիստը: Մենք այս նախագծով ուզում ենք անկախ մարմնի ներկայացուցչի անթույլատրելի վարքագծի վրա ուշադրությունը սեւեռել, Հակոբ Մովսեսը կողմնակալ է: Մնացած պատասխանատվությունը թողնում ենք իշխող ուժի վրա, որն ունի ձայների մեծամասնություն եւ իր քվեներով որոշումներ է կայացնում: Մեր գործառույթն այս պարագայում այն է, որ ցույց տանք, թե որքան սուբյեկտիվ, կողմնակալ ու անազնիվ, բոլոր տեսակի լծակները սեփական շահերի համար բանեցնող իշխանական ներկայացուցիչներով է շրջապատված գործող ուժը»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄՏԵՐՄԻԿ ԶՐՈՒՅՑ ՆԻԿՈԼԱՊԱՇՏ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՍ ՀԵՏ



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Սիրելի հայրենակից: Այս տողերը չեմ գրում քեզ դատելու, պիտակավորելու կամ նվաստացնելու համար: Գրում եմ քեզ հետ զրուցելու համար, որովհետեւ ցավ եմ ապրում՝ ոչ քո ընտրության համար, այլ նրա, որ այդ ընտրությունը ժամանակի ընթացքում վերածվել է կույր սիրո եւ հավատարմության:

Երկրի ղեկավարը վաղուց է բացահայտել իրեն՝ նրա խոսքը կտրված է իրականությունից, նրա որոշումները՝ հանրային շահից, նրա վարքը՝ պետական պատասխանատվությունից: Նրա հետ խոսելն անիմաստ է՝ նա չի լսում, չի ուզում լսել, նա ընտրել է իր ճանապարհը եւ պատրաստ է անցնել այն մինչեւ վերջ՝ անկախ գնից: Իսկ այդ գինը երկիրն է: Նույնքան անիմաստ է խոսել նրա անմիջական շրջապատի հետ՝ այն մարդկանց, որոնք իշխանության են հասել ոչ թե գիտելիքով, փորձով կամ կարողությամբ, այլ մեկ պարզ որակի շնորհիվ՝ անձնական, կույր հավատարմության: Նրանք այսօր օգտվում են այդ հավատարմության պտուղներից, իսկ օգտվողը չի հարցնում, չի կասկածում, չի ընդվզում:

Բայց դու այդ խմբից չես, դու այն մարդկանցից ես, ովքեր մի օր հավատացել են, որ հնարավոր է արդար պետություն, արժանապատիվ իշխանություն, օրենքի առաջ հավասարություն հաստատել: «Թավշյա» օրերին քեզ թվում էր, թե երկիրը վերջապես դուրս է գալիս փակ շրջանից: Այդ հավատը մեղք չէ՝ այն մարդկային է: Խնդիրն այն է, որ այդ հավատը պետք էր վերածել մտածողության, գործողության: Իսկ քեզ դա թույլ չտվեցին: Դու ապրում ես տեղեկատվական այնպիսի միջավայրում, որտեղ հանրային հեռուստատեսությունը երկիրը ներկայացնում է վարդագույն գույներով, որտեղ անհաջողությունները միշտ ուրիշների մեղքն են, որտեղ պարտությունները կոչվում են «բարդ ճանապարհ», իսկ ամեն մի քննադատություն՝ «ատելություն» ու «հակապետական գործունեություն», «հիբրիդային պատերազմ»: Այդ պայմաններում մարդը սկսում է պաշտպանվել ու մերժել իրականությունը: Ես քեզ դրա համար չեմ մեղադրում: Բայց ուզում եմ խնդրել՝ փորձիր մի պահ դուրս գալ այդ փակ շրջանակից: Տես, թե ինչպես է կառավարվում քո երկիրը:

Կառավարության նիստերում քննարկումները վերացել են: Տասնյակ հարցեր ընդունվում են առանց զեկուցման: «Չզեկուցվող»՝ գեղեցիկ բառ է, բայց դրա իմաստն այն է, որ որոշումները կայացվում են քեզնից գաղտնի: Քեզ չեն տեղեկացնում, քեզ չեն հարցնում, քեզ պարզապես փաստի առաջ են կանգնեցնում: Հետո հանկարծ պարզվում է, որ հարյուրավոր միլիոններ-միլիարդներ են փոխանցվել իշխանությանը մոտ կանգնած մարդկանց, հայտնի ու անհայտ անձանց՝ տարբեր «նվիրատվությունների» եւ ծրագրերի անվան տակ: Մինչդեռ այդ գումարները քոնն են՝ քո հարկերից, քո աշխատանքի արդյունքից են գոյացել: Սա քեզ չի՞ անհանգստացնում:

Ասում ես՝ «գոնե խաղաղություն է»: Իսկ ես քեզ հարցնում եմ՝ իսկապե՞ս խաղաղություն է: Սահմանին կրակոց չկա ոչ թե որովհետեւ մենք ուժեղացել ենք, ոչ թե որովհետեւ թշնամին դարձել է խոհեմ, այլ որովհետեւ հիմա կրակելը քաղաքականապես ձեռնտու չէ՝ այն կարող է խանգարել իշխանության վերարտադրությանը: Սա խաղաղություն չէ, սա հրադադար է՝ պայմանավորված հաշվարկներով, որի գինը վճարելու ենք բոլորս: Տնտեսության մասին խոսող մասնագետներն ասում են՝ ներդրումները կարճաժամկետ են, արդյունաբերական հիմք չի ստեղծվում, գիտահեն տնտեսություն չկա, պետական պարտքը կտրուկ աճել է: Եվ սա քարոզչություն չէ՝ այդ մասին թվերն են ճչում:

Պատերազմում հազարավոր զոհեր ունեցանք, տարածքային կորուստներ, սահմանային զիջումներ, եւ այս ամենից հետո մեզ ասում են՝ Հայաստանը դարձել է ժողովրդավարության բաստիոն, աննախադեպ ինքնիշխան: Երեւի այնքան ինքնիշխան, որքան Բատիլն էր ինքնիշխան միահեծան Լյուդովիկոս 14-րդի օրոք: Եթե սա ինքնիշխանություն է, ապա ինչպիսի՞ն է լինում կախվածությունը:

Հաճախ լսում եմ քո արդարացումը. «Խեղճ Նիկոլն ի՞նչ անի, ճար չունի»: Ընդունենք՝ ճար չունի, ախր մենք էլ հենց դա ենք ասում՝ Նիկոլը ճար չունի, Նիկոլն անճար է: Եթե այս ամենը շարունակվի, երկիրը գնալու է կործանման ճանապարհով, եւ դրա պատասխանատվությունը միայն մեկ մարդու վրա դնելն արդար չէ: Այո՛, վարչապետը գլխավոր պատասխանատուն է: Բայց ոչ մի վարչապետ իշխանության չի մնում ինքն իրենով, միայն իր ցանկությամբ: Մեր ընտրությամբ, մեր լռությամբ, մեր արդարացմամբ, թե՝ «դե, ուրիշը չկա», մենք, դու դառնում ենք այդ իշխանության, նրա սխալների համահեղինակը: Քաղաքացին պարզապես ընտրող չէ: Քաղաքացին իշխանության աղբյուրն է: Եթե այդ աղբյուրը պղտորված է, արդյունքը չի կարող մաքուր լինել:

Ընկերս, քո լռությունը համաձայնություն է, քո կույր հավատը քվե է, քո «ճար չունի»-ն նոր մանդատ է: Եվ սա մեղադրանք չէ՝ սա պատասխանատվության հիշեցում է: Եթե այսօր դու աչք ես փակում ակնհայտ սխալների վրա, վաղը ստիպված ես լինելու ապրել դրանց հետեւանքների հետ: Վարչապետն այն է, ինչ քաղաքացին թույլ է տալիս նրան լինել:

Տես՝ այն օրերին, երբ վարչապետը բացակայում է երկրից, Հայաստանում ինչ անդորր է՝ ո՛չ ճգնաժամ, ո՛չ սկանդալ, ո՛չ ցնցում: Սա պատահականություն չէ: Երբ նա չկա, երկիրը շնչում է: Դու չե՞ս ուզում հանգիստ ու խաղաղ կյանք, ստեղծագործ միջավայր, հայհոյանքից ու ատելությունից զերծ միջավայր: Իհարկե, ուզում ես: Ուրեմն օգնիր՝ հասնենք դրան:

Ես քեզ չեմ խնդրում միանգամից փոխել կողմնորոշումդ: Ես քեզ խնդրում եմ մտածել: Հարց տալ: Կասկածել: Լուրեր կարդալ տարբեր աղբյուրներից: Դա դավաճանություն չէ քո նախկին «սիրուն»: Դա քաղաքացի լինելու սկիզբն է: Փորձիր գոնե մտքով անջատվել նրանից: Տեսնել երկիրն առանց նրա կերպարի: Եվ գուցե առաջին անգամ զգաս, որ այդ անջատումն ազատություն է, անկախություն է, ինքնիշխանություն է, համերաշխություն է ու սեր: Ես քեզ չեմ ատում, ես ցավում եմ քեզ համար: Եվ հենց դրա համար եմ ասում՝ եթե այսօր չտարանջատվես «անջատվածից», վաղը քո լռությունը կդառնա քո դատավճիռը: Երկիրը կործանվում է ոչ միայն դավողների ձեռքով, այլ նաեւ՝ նրանց լուռ հավատացողների:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 27.01.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՀԵՌԱՑԱՆ ԼՔՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՀԱԿՆԵՐԸ

Շաբե ԱՎՈՅԱՆ

10 հայերը, որ մնացել էին Արցախում՝ չմիանալով 2023-ի մեծ գաղթին, ոչ մի հարցի լուծում չէին տալիս՝ ընկած հայրենիքում իրենց ներկայությամբ: Ոչինչ չէին կարող անել եւ ոչինչ չէին ապացուցում, միայն ավելացնում էին տագնապը՝ իրենց անվտանգության առումով... Ինչպե՞ս են ապրել քաղաք-ուրվականում, իրենք էլ ուրվական՝ լքված քաղաքի վերջին պահակները դարձած, 10-ով, միայնակ, արյունարբու թշնամու հնարավոր բարեգթության հույսին: Պատկերացնելն անգամ դժվար է, ինչ խոսք: Նրանք կամավոր գերիներ էին, որ իրենք էին որոշել գերի մնալ, որոշել էին իրենց կյանքով դառնալ «հեռանալն անհնար է» իրավիճակ ու ապրել այդ իրավիճակում: Բայց որքա՞ն: Պարզ է, որ երկար չէր տեւի, թեեւ որքան տեւեց՝ դա արդեն երկար էր:

Այս ամենը հասկանալով հանդերձ, նրանց Հայաստան գալու մասին լուրն էլ միանշանակ ընկալել հնարավոր չէ: Դա նորից, կարծես, ձգում է առանց այդ էլ պրկված մի նյարդաթել՝ մի հիշողություն, մի վիշտ, թե ինչպես հազարամյա հայրենիքը այսպես մաքուր, կարելի է ասել՝ ստերիլ, հանձնվեց թշնամուն՝ ապագայի համար նրան ոչ մի մտահոգություն չթողնելով: Երբեք չէր կարող թուրքը երազել այսպիսի վերջաբան: Չկա արցախցին, չկա Արցախը, քանի որ չկա այդ հողի տերը, եւ չկա նրա պահանջատիրությունն իր հայրենիքի նկատմամբ: Հարցը փակված է, էջը՝ թերթված, թշնամու համար հնարավոր ամենաձեռնտու, իսկ հայի համար՝ ամենադաժան սցենարով:

Լավ է, որ այս մարդիկ եկան Հայաստան, բայց անգամ այդ դեպքը իշխանական քարոզիչները կարողացան օգտագործել մեկ անգամ եւս ցավ պատճառելու համար: Ցավ պատճառելու մեծ մասնագետ կարելի է համարել եւ միշտ հենց այդպես հիշել Արսեն Թորոսյանին, որն ակնհայտորեն հաճույք է ստանում «Արցախն Ադրբեջան է» մտքից: Նա ազդարարեց. «Սիրելի հայրենակիցներ, տեղեկացնում եմ, որ Ադրբեջանի Հանրապետությունում (Ղարաբաղում) մինչ այժմ բնակվող 10 հայեր եւ ազգությամբ ռուս մեկ ՀՀ քաղաքացի... տեղափոխվել են Հայաստանի Հանրապետություն»: Ոչ մի Արցախ՝ փակագծում, թե դրանից դուրս, այս մարդը արտաբերել չի կարողանում: Այսօր, ահա, այսպիսի մարդիկ են կանգնած իշխանության ղեկին, որոնք ոչ միայն կործանել են ծաղկուն ու սիրելի մի հայրենիք, ոչ միայն ուսեզրկման ու կոտորածի են մատնել արցախցիներին, այլեւ փորձում են խոշտանգել դրա համար ցավ ապրող ու մոռանալ չցանկացող եւ անգամ չկարողացող մարդկանց: Փորձում են կործանել եւ վերացնել հիշողությունը, փոխել՝ վերացնել պատմությունը, նոր կետից, զրոյական, մաքուր՝ մանկուրտի կետից սկսել իրենց պատկերացրած «իրական» Հայաստանը:

Եվ այդքանից հետո Արսեն Թորոսյանը ցուցադրում է սոցցանցում իր զինվորական գրքույկը: Անհասկանալի ժամկետով, անհասկանալի տարիքում նա ծառայել է հայկական բանակում, հպարտանո՞ւմ է նա: Իրավունք ունի՞ արդյոք հպարտանալու, թե հայրենիքի զինվոր է եղել: Դատեք ինքներդ, քանի դեռ արդարադատության ձեռքերը կարճ են՝ դատելու համար այս մարդու հնչեցրած մտքերը: Բայց այս վերջին մարդկանց գաղթի մասին նրա արձանագրությունը կհիշվի, կմնա պատմության մեջ, ինչպես, օրինակ, մի անջնջելի սեպագիր արձանագրություն: Մի հայտարարություն, որը նույնությամբ երեւի տեղադրել են ադրբեջանցի պաշտոնյաները՝ ի հզորություն իրենց երկրի եւ ի սարսափ թշնամիների: Իսկ ի՞նչ նպատակով է դա արել Արսեն Թորոսյանը: Այո, նա եւս դա արել է՝ հուրախություն ադրբեջանցի եղբայրների, ի հզորություն Ադրբեջան երկրի եւ ի վիշտ ու ի սարսափ մեզ՝ գիտակցական ամբողջ կյանքում Արցախով հպարտացած մարդկանց:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am